

5174

ՀԱՅԵՐ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ

551.5

Ա-84

№ 4

ՖԵՆՈԼՈԳԻԿ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ծրագիր յեվ նրանանց)

Կազմեց Ա. ԱՐԱՐՈՒՏՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1929

Հ. Ա. Խ. Հ. ԳԵՎՈՐԳԻՑԵԿԵՆ ԿԵՆՑՐՈՆԱԿԱՆ ԲՈՒԺՔ

551-5
Ա-84

№ 4

Հ
ՓԵՆՈԼՈԳԻԿ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Մրազիր յեվ հրահանգ)

Կազմեց Ա. Ա. Բ. Բ. Բ. Զ. Ա. Ն.

\$ 4 7002

1929 թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՑՐԱՎԱՆ

(14526-52)

2010

ԱԹԱԶԱԲԱՆ

Ֆենոլոդիկ գիտողությունները բավական մեծ անցյալ ունեն: Նրանցով հետաքրքրվել են թե՛ միջնադարի վանականները, թե՛ պաշտոնական ու անպաշտպան բընագետները և թե՛ վերջապես ամբողջ մարդկությունն իրը մի խոչը ու բարդ կոլեկտիվ: Սակայն ֆենոլոդիկ գիտողությունների գիտակցական ու պլանաշափ կազմակերպումը միայն մի քանի տասնյակ տարվա պատմություն ունի:

Մեր յերկրի տնտեսական վերելքը, յերկրի արտադրական ուժերի ուսումնասիրությունը և գավառագիտական կազմակերպությունների ծավալումն ու նրանց աշխատանքի խորացումն իրար զուգահեռ են զարգանում: Գավառագիտական ընկերություններն են միայն, վորոնք վորպես տեղական և մասսայական կազմակերպություններ կարող են լայն բազա ստեղծել յերկրի արտադրական ուժերի ուսումնասիրության համար:

Դժբախտաբար այդ յեղրակացությանը դեռ չեն յեկել վոչ մեր գյուղական ու ավանային մասսան և վո՛չ ել նույնիսկ մեր մասսայական ինտելիգենտ աշխատավորները (անդամ ուսուցիչները),

Նման անբարեհաջող պայմաններում չի կարելի խաչը և բարդ խնդիրներ դնել մեր նորակազմ և դեռ յերերուն տեղական գավառագիտական կազմակերպությունների առաջ: Անհրաժեշտ է նրանց կրթել աստի-

ՀԱՅՊՈԼԵԳՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 4685
ԳՐԱՌԵՊԱԼԻԿԱՐ 2699 (Բ)
ՏԻՐԱԺ 800

12709 - 58

ճանաբար՝ ամենապարզ, քիչ գլխացավանք և ծախս պահանջող աշխատանքներից դեպի ավելի բարդերը տանելով:

Այս տեսակետից Փենոլոգիկ դիտողությունները, վորպես յերկրի արտադրական ուժերի զարգացման պայմանների ուսումնասիրության համեմատաբար պարզ ձեւ բավարարում են առաջարած պահանջներին: Ֆենոլոգիկ դիտողություններ կատարելը հեշտ է, շնչքեր, զործիքներ և առհասարակ մեծ ծախսեր չեն պահանջում. նրանց պահանջած ծախսերն են գրելու թուղթ, մատիտ և յերեմն եւ հին լրագրեր բույսեր չորացնելու համար: Ֆենոլոգիան սկսնակ դավառագետից պահանջում է միայն աշխատելու ցանկություն և մի քիչ եւ գիտակցական վերաբերմունք:

Առաջին պայմանը՝ աշխատելու ցանկությունը կախված է թե՛ արտաքին պայմաններից և թե՛ գլխավորապես իրեն՝ աշխատողի հակումներից, ընությունը սիրելուց, նրանով հետաքրքրվելուց և վոր գլխավորն եւ սիրած աշխատանքի համար ժամանակ և յեռանդ չինացնելուց:

Ինչ վերաբերվում է գիտակցական վերաբերմունքին դեպի ֆենոլոգիկ աշխատանքները, դրա զարգացնել միայն ժամանակի խնդիր է: Հենց այս փոքրիկ գըրգույկով ցանկացել ենք մասամբ բավարարել այդ պահանջ՝ տալով տեղում աշխատող գավառագետի ձեռքը ֆենոլոգիայի համառոտ բացարությունը և դիտությունների ծրագիրն ու հարհանգը:

Գրքույկս կազմված է կոլեկտիվ կերպով: Դիտությունների ծրագիրը քննված է մշակված և հատուկ հանձնաժողովի կողմից: Ծրագրի քննության և մշակ-

ման աշխատանքին մասնակցել և ոժանդակել են Անտոնյան Ա. Մ. (Կենտրոնական Մանկավարժական թանգարան), պրոֆ. Բեղելյան Հ. Լ. (Գիտական ինստիտուտ), Էկսիցյան Ս. Դ. (Կենտրոնական Գավառագիտական Բյուրո), Կարա-Մուրզա (Յերևանի Բուսաբանական այգի), Ներսիսյան Ա. (Ողյերենութարանական կայան), Շեկովնիկյան Բ. Ա. (Գյուղատնտեսական թանգարան):

Տպագրությունից առաջ գրքույկն ընթերցվել է և վերջնականապես հավանություն ե գտել հրատարակելու հիտելյալ կազմով հանձնաժողովի կողմից՝ ընկ. ընկ. Էկսիցյան, Ռ. Գարբրիելյան, Մ. Զառաֆյան, Ա. Ներսիսյան և Հուշիկ:

Գրքույկս կազմելուն և նյութն ու լեզուն խմբագրելուն իրենց հիմնավոր խորհուրդներով անընդհատ մահակցել են Ա. Անտոնյանը և Ս. Էկսիցյանը:

Նյութն ի մի բերելու և չարագրելու մնացած կազմովական աշխատանքը կատարել է Ա. Արարատյանը:

Թե՛ բացատրականը, թե՛ ծրագիրը և թե՛ հրահանգները կազմելիս ի նկատի յեն ունեցվել մի կողմից վերոհիշյալ մասնագետների անձնական բազմաժայ փորձը, մյուս կողմից Վրաստանի և Ռուսաստանի ֆենոլոգների փորձը՝ նրանց կազմած ձեռնարկներից: Առանձնապես մեծ ուշից ե գարձել թիֆլիսի Բուսաբանական այգու աշխատակիցներ Ա. Դ. Բալաբույեվի և Ն. Ա. Տրոյցիկու ձեռնարկին՝ կազմած Արևելյան Վրաստանի համար (Ա. Г. Балаубев и Н. А. Троицкий, «Наблюдения над периодическими явлениями в природе» Программы и инструкции):

Մեր յերկիրն իր բնությամբ ավելի նման է Արևելյան Վրաստանի (կամ այլ հարևան յերկրի) քան մի հե-

ռավոր տեղի : Այս պատճառով ել ծրագիրը կազմելիս
բնականաբար ավելի շատ ոգտվել ենք այդ յերկրի հա-
մար գրված ձեռնարկից :

Գրքույկս առաջարկվում ե դավառագետներին, ու-
սուցիչներին և առհասարակ բոլոր սիրողներին—իբր
նախնական մի աշխատանք, վորը դեռ կարոտ ե մաս-
սայական դավառագետի խորհուրդներին և դիտողու-
թյուններին :

Հույս ունենք, վոր այս կարևոր ձեռնարկը վերա-
հարատարակելիս կամ նման մի այլ ձեռնարկ կազմելիս
մեր ձեռքի տակ կունհնանք տեղերում աշխատողների
բազմակողմանի դիտողությունները թե՛ ծրագրի վերա-
բերմամբ և թե՛ առհասարակ գրքույկիս թերություննե-
րի մասին :

Բոլոր նմանորինակ դիտողությունները չնորհակա-
յությամբ կընդունվեն Գավառագիտական Կենտրոնա-
կան Բյուրոյի կողմից :

ԳԱՎԱՌԱԳԻՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲՈ

1929 թ. Յերևան.

I. ՖԵՆՈԼՈԳԻԱ

Առաջին հայացքից ստարոտի և խրթին թվացող
այս բառը հոմարեն ե և բառացի նշանակում ե ուս-
մունք յերեսույթների մասին : Սակայն ֆենոլոգիա բառն
ավելի նեղ իմաստով են դործածում, քան նա արտահայ-
տում ե : Ֆենոլոգիա ասելով հասկանում են ուսմունք
րնության սեղոնային յերեսույթների մասին :

Ֆենոլոգիայի մասին շատ բնորոշումներ կան, գը-
րանցից ամենալրիվը բերում ենք այստեղ :

Էստ այդ բնորոշման Փենոլոգիան նախ պարզում ե
կենդանի եյակների յուրաքանչյուր տեսակի զարգաց-
ման ընթացքը :

Յերկրորդ՝ ցույց ե տալիս, վոր տվյալ տեղի հա-
մար զանազան տեսակների զարգացման փուլերի հաջոր-
դականությունն անփոփի ե և կայուն :

Յերկրորդ՝ պարզում ե ողյերեսույթաբանական գոր-
ծոնների և դիտողության առարկաների՝ բույսերի ու
կենդանիների զարգացման կապակցությունը : Այս վեր-
ջին կետից բղիում ե, վոր յուրաքանչյուր աշխարհա-
գրական վայր կյանքի զարգացման վերաբերյալ իր ա-
ռանձնահատկություններն ունի : Յերկրի աշխարհա-
գրական ու տեղագրական պայմաններն առաջացնում են
տվյալ տեղի կենսակիման՝ կլիման բույսերի և կենդա-
նիների վերաբերմամբ և դանդաղեցնում կամ արագաց-
նում են սեղոնային յերեսույթների ընթացքը :

Այստեղ շեշտված ե ողյերեսութաբանության և կեն-

դանի եյակների կյանքի ընթացքի կապը : Այնուհետև
սրա հիման վրա ըստ առաջարկված նպատակի կարելի
յի ուսումնասիրել կամ կլիման կենդանի եյակների զար-
դացումը դիտելով կամ ընդհակառակը՝ կենդանի եյակ-
ների կյանքի զարդացումը տվյալ աշխարհագրական մի-
ջավայրում : Ողերեւույթաբանը կվարվե առաջին ձեռվ՝
ընազետը՝ յերկրորդ ձեռվ՝ սակայն սրանից ֆենոլո-
գիայ եյությունը չի փոխվի :

Այստեղից մենք կարող ենք յեղակացնել, վոր Փե-
նոլոգիան ողյերեւույթաբանության կամ ընազիտության
մի ճյուղը չի հանդիսանում : Ֆենոլոգիան դիտության
ինքնուրույն մի ճյուղ է, վորն իր նպատակներով, նյու-
թով և հետազոտական ձևերով ողյերեւույթաբանության
և ընագիտության միջին տեղն ե բոնում :

Ֆենոլոգիան իր նյութին ուսումնասիրում է դիտո-
գության միջոցով : Ֆենոլոգն անաշառ կերպով դիտում
ու գրի յի անցկացնում տեղի ունեցող սեզոնային յերե-
վույթները՝ առանց նրանց ընթացքին խառնվելու : Այս
դիտությունն արհեստական ձեռվ սարքած միջավայ-
րում չի տեղի ունենում (լարորատորիա, ջերմոց, կեն-
դանի անկյուն) :

Ֆենոլոգի դիտությունների հրապարակն ազատ
ընությունն է : Այս տեսակետից իրենց բնույթով նրանք
մոռենում են եքսկուրսիոն աշխատանքներին, բայց նը-
րանցից տարբերվում են մի ուրիշ հատկանիշով : Ֆենո-
լոգիկ դիտությունները տեսական են, անընդհատ և
կապված նույն տեղի հետ (ստացիոնար են) : Ֆենոլոգն
ամեն որ շրջում է դիտում և ընտրած միենալուն առար-
կաները և իր դիտությունները գրի անցկացնում :

Այսպիսով ստացվում ե բնության որագիր : Ֆենո-

լոգիայի հիմնական և ամենապատասխանատու աշխա-
տանքը հենց այդ որագիրը կազմելն է :

Աշխարհագրական պայմանների և կենդանի բնու-
թյան կապը պարզելու համար բացի բուսաբանական և
կենդանաբանական դիտություններից նշանակում են
և մի շարք ողյերեւույթաբանական և ջրաբանական դի-
տություններ :

Բազմաթիվ և բազմամյա դիտությունները հնա-
րավորություն են տալիս կազմելու տվյալ տեղի բնու-
թյան որացույցը, վորի մեջ նշանակված են պարբերա-
կան (սեզոնային) յերեւույթների ժամկետները :

Բազմաթիվ տեղերի նույնանման դիտություննե-
րը համադրելով կազմում են վորեւ յերեւույթի կամ մի
շարք յերեւույթների շարժման ընթացքի քարտեղը : Այս
աշխատանքը կատարում են հատուկ մասնագետներ
կենտրոններում, վորտեղ կուտակվում են դիտությու-
թյունները յերկրի բոլոր տեղերից :

Բնության որացույցը և Փենոլոգիկ քարտեղներն
իրար լրացնում և ամելի լրիվ կերպով են պարզում տե-
ղի կենսակիման :

Բնության որագրից կարող է ոգտվել բնագիտու-
թյունը, պարզելով վորոշ առարկաների զարդացման ըն-
թացքը և այդ ընթացքի կախումը միջավայրից :

Բնության սեզոնային յերեւույթների հետ կապված
են մի շարք արտադրական հատկապես գյուղատնտեսա-
կան ճյուղեր : Ֆենոլոգիայի տեսակետից հետաքրքր են
գյուղատնտեսական այն առարկաները՝ բույսերը և վո-
րոշ կենդանիները, վորոնց զարդացումն անմիջորեն կապ
ված ե արտաքին պայմանների ու բնության կյանքի
ընթացքի հետ : Պարզ է, վոր մարդը կամաւակամա վա-
րնթացքի հետ :

դուց պետք ե ուշք դարձներ այդ կապի վրա և աշխատեր մի կողմից պարզել այդ կախումը, մյուս կողմից իր տնտեսությունը հարմարեցներ բնության դարգացման տեմպին: Այս տեսակետից բնության որագրի մեջ պիտի դրանցվեն թե՛ գյուղատնտեսական աշխատանքները, վորոնք դարերի փորձի արդյունք են և թե՛ մշակովի բույսերի զարգացման փուլերը: Այս առթիվ ժողովուրդն ունի հատուկ առածներ և նշաններ, վորոնք ցույց են տալիս բնության պարբերական յերեսույթների և գյուղատնտեսական պրոցեսների կապը:

Յեթե ժողովուրդը դարավոր վոչ գիտական փորձի ու սովորության հիման վրա կարողանում է յեղանակի վերաբերմամբ դուշակություններ անել և ըստ այնմ ել դասավորել գյուղատնտեսական աշխատանքները, ապա մենք իրավունք ունենք սպասելու, վոր Փենոլոգիան նույնը պետք է անի ալիքի գիտակցորեն և անսխալ կերպով: Յեկ իսկապես, Փենոլոգիան, յեթե նա լավ է դըրված և բավականաչափ ուշադրության է արժանանում, կարող է յեղանակի վերաբերմամբ ստույգ դուշակություններ անել և այդպիսով ժողովրդական տնտեսությանը մեծ ծառայություններ մատուցել:

2. ՖԵՆՈԼՈԳԻԿ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ֆենոլոգիան տեսական և գործնական խոշոր նշանակություն ունի: Ինչպես արգեն տեսանք նախորդ գլխում, նրա գործնական նշանակություն ունեցող ամենակարևոր կետը՝ յեղանակի գուշակումն և գյուղատնտեսության նպատակների համար:

Ինքն ըստ ինքյան հասկանավի յե, վոր այս կետը շատ խոշոր նշանակություն ունի ժողովրդական տնտեսության համար: Գյուղատնտեսությունը մի այնպիսի արտարգություն է, վորը մեծ չափով կախված է արտաքին պայմաններից: Կլիման, հողն ու միջավայրի այլ տարերքն են, վոր ստիպում են տնտեսին վորոշ կերպով դասավորել աշխատանքներն ու այդպիսով կախման մեջ են պահում նրան: Բայց դա դեռ քիչ է: Ցեղանակի ընթացքն ամեն տարի յել նորոյնը չի մնում: Զանազան բարդ պատճառներից նա անընդհատ փոփոխվում է՝ տատանվելով տվյալ վայրի համար միջին դրության չորքը: Այդ տատանմանը պիտի հարմարեցնել և գյուղատնտեսական աշխատանքները: Լավ գյուղատնտեսը պետք է միշտ աշալուրջ հետևի բնության կյանքի ընթացքին և ըստ ֆենոլոգացույցին ու որագրի կազմակերպի իր աշխատանքները և վոչ թե կուրորեն դեկավարվի ամիսներով և ամսաթվերով: Ի հարկե թե՛ առհասարակ տնտեսության և թե՛ մասնավորապես նրա մեջ տեղի ունեցող աշխատանքների կազմակերպումը միայն ընական պայմաններից չի կախված: Բնական պայմանները տալիս են միայն այն շրջանակը, վորից գուրս տնտեսություն կազմակերպելն անմիտ բան է: Սա կարենոր և նաև նոր մշակույթներ մտցնելու ինդրի՝ ակլիմատիզացիայի (տեղական կլիմային հարմարեցնելու) համար: Ֆենոլոգիայի տվյալները նշում են գյուղատնտեսության գարգացման բնական շրջանակը վոչ միայն ամեն վայրի, այլ և յուրաքանչյուր վայրի տարրեր տարիների ու յեղանակների համար:

Ի՞նչպես և կատարվում յեղանակի գուշակությունը:
Դրա համար պետք է լինեն վորոշ նախադրյաներ:

Նախ՝ պետք ե ունենալ մի շարք դիտողական կետեր, վորտեղ Փենոլոգիայի պահանջների համաձայն անընդհատ դիտում ու զրի յեն անցկացնում բնության սեղոնային յերեսույթները: Այնուհետև՝ պետք ե 7 և ավել տարիների դիտողությունների հիման վրա կազմել տվյալ վայրի բնության որացույցը:

Ձեռքի տակ ունենալով որացույցի միջին ժամկետները և ընթացիկ դիտողությունները կարելի յե մոտավորապես պարզել, թե պարբերական յերեսույթները միջինից ինչ թափով և ինչ ուղղությամբ են շեղվում՝ քանի որով են առաջ կամ յետ ընկնում:

Այդ ձեռվ կարելի յե մոտավորապես գուշակել, թե առաջիկայում յեղանակն ինչպես կընթանա: Սակայն միայն տեղական տվյալների հիման վրա դեռ ևս հնարագոր չե ստույգ կերպով գուշակել յեղանակը: Անհրաժեշտ ե պարզել թե վորևէ տեղի յեղանակի ընթացքն ամբողջ յերկրի ցանցի մեջ ինչ տեղ ե բոնում: Միայն այս ձեռվ՝ խաչաղիր ստուգելով, ուղղումներ մտցնելով կարելի յե քիչ սխալով գուշակել յեղանակը:

Դեռ ավելին կարելի յե ասել: Ամբողջ յերկրագունդը կարելի յե պատկերացնել իրը մի խոշոր և բարդ Փենոլոգիկ առարկա, վորն ունի յեղանակի իր ընդհանուր և ուրույն ընթացքը՝ կազմված բոլոր վայրերի տեղական յեղանակներից,

Ֆենոլոգիայի նորագույն տեսությունների չնորհիվ պարզված ե, վոր պարբերական յերեսույթների ժամկետների արագացումը և դանդաղեցումը վորոշ որինաչափությամբ ե կատարվում:

Մինչ այժմ կատարած դիտողությունների հիման վրա յերկրագունդի շուրջը մի բանի Փենոալիքներ կան,

վորոնք դանդաղորեն՝ ամիսը 600—800 կիլոմետր արագությամբ շարժվում են սովորաբար արևելքից դեպի արևմուտք:

Այստեղից պարզ ե, վոր պետք ե լինեն բազմաթիվ տեղական Փենո-պունկտեր (կայաններ), վորոնք մի կողմից իրենց հավաքած տվյալները մշակում և տեղական բնության որացույց են կազմում և մյուս կողմից այդ տվյալների պատճեններն ուղարկում կենտրոնները այդ տվյալների պատճեններն ուղարկում կամացամասնական ընդհանրացումներ անելու և զանազամապատճանական ընդհանրացումներ անելու և զանազամապատճանական տեսակի Փենո-քարտեզներ կազմելու համար:

Ֆենոլոգիայի գործը կանոնավոր հիմքերի վրա գընելու համար շատ աշխատանք ե պահանջվում, սակայն այդ աշխատանքն իր ժամանակին բազմապատճեն արգարանալու և վարձատրվելու յի:

Բացի գյուղատնտեսությունից, Փենոլոգիան մեծ նշանակություն ունի և այլ բնագավառների համար:

Ողերեսույթաբանն ուսուվում ե նրանից իր նպատակների համար: Ողերեսույթաբանը յեղանակի առանձին տարրերն ուսումնասիրելով համադրում ե նրանց աըվայլները, դրանց հիման վրա պարզում ե յեղանակը և աեղի լլիման և աշխատում ե գուշակել յեղանակը: Իհարկե այսուղի աշխատանքն ավելի բարդ և ընդհանիչարկե այսուղի աշխատանքն ավելի բարդ և ընդհանիչարկե այսուղի առաջնային բարդություններն ու գուշակություններն ել առաջնային բարդություններն ու գուշակություններն ել վերապահորեն կարճատե ժամանակի համար և այն ել վերապահորեն կարելի յե կատարել:

Այլպես չե ֆենոլոգիան: Մրա գործիքները վաչ թե ջերմաչափն ու խոնավաչափն են, այլ բույսերը և կենդանիները, վորոնք վոչ թե յեղանակի տարրեր տարրերն զանիները, վորոնք վոչ թե յեղանակի տարրեր տարրերը դասակարգությունները՝ այս գուշակությունները այն ձեռվ, ինչ ձեռվ այդ տարրերի համարդություննը՝ այն ձեռվ, ինչ ձեռվ

դա կարենու և մեր առաջյա և գործնական կլանքի Համար :

Ուշերեսույթաբանը՝ չհրաժարվելով իր ուսումնասիրության սպառիչ և հիմնական ձևերից կարող ե ոգավել Փենոլոգիայի տվյալներից և վորոշ տեսակետից կազմացնել իր համադրական աշխատանքուն:

Բնագիտությունն ել իր հերթին ոգտվում ե ֆենո-
լոգիայի տվյալներից կամ ավելի ճիշտ ֆենոլոգիայի
մեթոդից՝ պարզելու իրեն հետաքրքրող հարցերը։ Շը-
նորհիվ ֆենոլոգիկ դիտողությունների բնագիտությու-
նը պարզում ե բույսերի և կենդանիների զարգացման
փուլերը և նրանց կախումը՝ միջավայրից։ Նա այդ ձևով
ուսումնասիրում ե նաև համակեցությունների զարդա-
ցումը։ Հիշած խնդիրները մեծ արժեք են ներկայաց-
նում բնագիտության համար և խոչոր գործնական նշա-
նակություն ունեն առաջին հերթին հենց գյուղատնտե-
սության ճյուղերի՝ դաշտավարության, մարդավարու-
թյան, այդեղործության և գրանց առընթեր մեղվարու-
թյան, անհանապահության և այլ հուսակեր համար։

Իվերջո, Փենոլոգիան վորպես բնությունն ուսում-նասիրող մի գիտություն մեծ տեղ ունի դպրոցում։ Խորհրդային դպրոցի խնդիրների լուծումը մեծ չափով կշահի, յեթե Փենոլոգիան պատշաճ տեղ գրավի դպրոցում և կանոնավոր հունի մեծ դրմի։

Զաբետք և **աչքաթող** անենք և **ֆենոլոգիայի** մի կարևոր հատկանիւց։ Ֆենոլոգիան աշխատանքի միանդամայն կոնկրետ, պարզ և հեշտ նյութ ե տալիս գավառադիտական կազմակերպություններին։ Բացի այդ, ինչպես արգեն առաջարանում ասված ե, նա մատչելի յեմեր գավառի կազմակերպություններին և մի այլ տեսա-

զիտից . Նա մեծ ծախսեր , դորձիքներ , շենքեր և այլն չի
պահանջում և հնարավոր ե ամենանվազագույն ծախսե-
րի դեպքում իսկ : Այս տեսակետից Փենոլոդիայի կազ-
մակերպչական դերը շատ մեծ է : Թանգարան և բուսա-
բանական այդի ամեն տեղ և ամեն պայմաններում ել-
լազմակերպել հնարավոր չե . դրա համար հարկավոր
են հասարակական լայն ոժանդակություն և բավական
դրամի ծախսեր :

Ֆենոլգիկ դիտողություններ կարող ե կատարել
ամեն մի գյուղացի, գյուղատնտես, վորսորդ, անտա-
ռապահ, ողյերևույթաբան, ուսուցիչ, ուսանող, աշա-
կերտ և գավառադիտական ընկերության անդամ կամ
վոչ անդամ յուրաքանչյուր քաղաքացի, յեթե նա գործը-
սիրի, դիտողությունները ինամքով կատարի և ղեկա-
վարվի Փենոլոգիայի նվազագույն պահանջներով:

Յ. ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնության մեջ դիտելու շատ բան կա ե , ի հարկե ,
ցանկալի յե հնար յեղածին չափ շատ առարկաների վրա
կատարել դիտողություններ : Սակայն այս սկզբունքը
խորհուրդ չելինք տա սկսնակ Փենողողներին : Ամեն ինչ
կամ շատ բան դիտելով Փենողողը կցրվի , կվատնի ու-
ժերը և գուցե սակավարժեք արդյունք ստանա : Ուստի
Լին փորձի համար առաջարկում ենք յեկավարվել «քիչ ,
բայց լայ» սկզբունքով : Բացի այդ՝ ամեն առարկա յել
հարմար չե ստույդ դիտողության համար : Ավելի լավ ե
քիչ առարկաներ ընտրել , բայց բազմակողմանի ու կա-
նոնավոր կերպով մի շարք աարիների ընթացքում դի-
մակե :

Այդ պատճառով ել ընտրում են բնության այն առարկաները, վորոնց գիտելիք մի քանի տեսակետներից նպատակահարմար է: Այս ձևով են կազմում Փենոլոգիկ գիտողությունների ծրագրներն ամբողջ յերկրի կամ նրա զանազան շրջանների համար:

Սովորաբար յեղած փորձի և ավլաների հիման վրա կենարոններում հասուլ հանձնաժողովներ մշակում են Փենոլոգիկ գիտողությունների ծրագրը: Այդ ծրագրը տեղերում յենաթրկում են վորոշ լրացումների ըստ տվյալ վայրի պարմանների և ապա գործադրության մեջ են դրվում:

Ծրագրում բերված են առարկաների անունները և թե ինչ յերեսոյթ պետք է գիտել ու դրի անցկացնել:

Դիտողության առարկաներն ընտրելիս ի նկատի յեն առնում Փենոլուտիայի հետեւալ պահանջները:

1. Այդ առարկաները պիտի բավական տարածված լինեն թե տվյալ վայրի սահմաններում և թե Միության մեջ ու այլուր: Աս միանդամայն իրավացի պահանջ ե բղխում և դիտողությունների միտրինակության սկզբ-քունքից: Ընդհանրացումներ անել և Փենոքարտեղներ գծել կարելի յե միայն այն դեպքում, յերբ մեծ տարածությունների համար միութիւնակ և միատարր տվյալներ ունենք: Հակառակ դեպքում մենք կարող ենք տեղերի համար շատ արժեքավոր, բայց լայն ընդհանրացումներ անելու համար լիոյ միատարր տվյալներ ունենալ: Հասկանալի յե, վոր այս դեպքում դիտողությունների արժեքը թուլանում է և մենք զրկվում ենք Փենոլոգիայից գործնական ստույգ յեզրակացություններ պահանջելու իրավունքից: Այդ պատճառով ել ծրագրի մեջ անպայման պետք է լինեն հանրատարածված առարկաներ, թե-

կուզ նրանք տվյալ տեղի համար շատ ել բնորոշ չլինեն: Այս տեսակետից անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային և միութենական ֆենոլոգիկ ծրագրները: Տեղական ծրագրերը կազմելիս պետք է անպայման հենվել այդ ընդհանուր նվազագույն ցուցակների վրա և նկատի առնել նրանց մեջ թված առարկաները:

2. Ֆենոլոգիկ գիտողությունները պետք է լինեն անընդհատ: Բազմաթիվ տարիների գիտողություններից է, վոր ստանում են այնքան կարեոր միջին տվյալները:

Այս ուղղությամբ Անդրկովկասում և մասնավորապես Հայաստանում Փենոլոգիան համարյա անցյալ չունի, յեթե չհաշվենք հատ ու կենտ կատարած գիտողությունները:

3. Պահանջներից մեկն ել այն է, վոր ընտրված առարկաները պետք է տեղերի համար բնորոշ լինեն: Ի հարկե, ֆենոլոգիկ ծրագրի մեջ սենյակի կամ ջերմոցի բույսեր մտցնել չենք կարող: Դրանում աճող բույսերց ել պետք է ընտրենք գլխավորապես տվյալ վայրի համար բնորոշները: Այս կետում մենք ստիպված ենք մի փոքր շեղում կատարել. վորոշ առարկաներ գործե և տեղի համար բնորոշ չեն, բայց պիտի մտնեն ծրագրի մեջ: Այսպես որինակ ձիու շապանակը մեզ մոտ վայրի չի բանում, նրան աճեցնում են իբր զարգարույ: Առակայն ի նկատի առնելով, վոր ձիու շապանակը լայն տարածված է Արևմտյան Յեղոպայում և Միության մեջ և մտնում է նրանց նվազագույն ծրագրների մեջ, ուստի վորքան ել նա մեր յերկրի համար բնորոշ չլինի, քիչ տարածված լինի, այսուցինանմելու ամբ ծառը պետք է անպայման մտնի ծրագրի մեջ:

Ա. ՄՅԱՆԻՑԱՐԻ
Անկան
Պубличная Библиотека

4. Բացի այդ պահանջներից, ընտրված առարկաները պետք ե լինեն հանրածանոթ և հեշտ ճանաչելի: Այդ պատճառով ել նվազագույն ծրագրի մեջ աշխատում են դնել ամենածանոթ առարկաները: Մեր ծրագրում կան և վոչ հանրածանոթ առարկաներ, այդպիսի առարկաներ ընտրելիս ղեկավարվում են հեշտ ճանաչելիության սկզբունքով: Այդ բանը հեշտացնելու համար տալիս ենք նաև առարկաներից մի քանիսի պատկերները և կարճ նկարագրությունները:

5. Վերջապես շատ կարենոր մի պահանջ ել կա. առարկաները պիտի հարմար լինեն ոքյեկտիվ և ստույգ դիտողություններ կատարելու համար: Այսպես որինակ հանրածանոթ և շատ տարածված խատուտիկ բոլորովին հարմար չե ֆենոլոգիկ դիտողությունների համար: Նախ՝ խատուտիկն ավելի շուրջ անդրադարձնում ե այն լանջի կամ փոքր հողամասի ազդեցությանը, վորի վրա ինքն աճում ե քան տվյալ յերկրի կենսակիման: Յերկրորդ՝ նա ծաղկում ե վող տարին և դժվար ե նկատել ու նշանակել այդ կարենոր փուլի՝ ծաղկելու սկիզբը կամ վերջը, յերրորդ՝ խատուտիկը բազմաթիվ տեսակներ և այլատեսակներ ունի, վորոնք տարբեր ժամանակներում են ծաղկում: Ի հարկե սա խանդարող հանդամանք ե, թույլ չի տալիս միորինակություն մտցնել դիտողությունների մեջ:

Նույնը կարող ենք ասել, և մասրենու, ցորենի, բամբակի, խաղողի, խնձորի և այլ առարկաների մասին: Սրանք ել բազմաթիվ տեսակներ և այլատեսակներ ունեն և դրանով դժվարացնում են ֆենոլոգի գործը:

Այսպիսի առարկաների վրա դիտողություն կատարել կարող են միայն մասնագետները, վորոնք լավ ճա-

նաչում են տեսակներն ու այլատեսակները: Իսկ յեթե դիտողը մասնագետ չե, ապա դիտողության հետ պետք ե դնի և բույսերի նմուշը կամ նրա մանրամասն նկարագիրը: Մասսայական դիտողությունների համար նման առարկաներն անհարմար են, ուստի և ծրագրի մեջ չեն մտել:

Ի նկատի ունենալով վերոհիշյալ պահանջները, դիտողության առարկաները ընտրելիս առաջնությունը տրվում է վայրի բույսերին ու կենդանիներին հանդեպ մշակովի բույսերի և ընտանի կենդանիների:

Բույսերն ու կենդանիներն ել իրար հետ համեմատելով գտնում ենք, վոր առաջիններն ավելի վստահելի յեն քան յերկրորդները: Նախ բույսը մշտապես կապված է վորոշ տեղի հետ, ուստի և նրա վրա զանազան ժամանակներում կատարած դիտողությունները միորինակ կլինեն: Այսպես չեն կենդանիները: Բացի այդ բույսի դարգացման փուլերը գիտեն ավելի հեշտ ե: Վերջապես բույսն ավելի լավ ե անդրադարձնում յեղանակի ազդեցությունը, վորովհետեւ մշտապես և անընդհատ յենթակա յեն նրան, մինչդեռ կենդանին շարժուն ե, հեշտությամբ խուսափում ե անբարեհաչող պայմաններից և վորոշ ձևով փոխում ե նրանց ազդեցությունը: Սակայն սա բացարձակ չպետք ե հասկանալ. կենդանիների վրա կատարած դիտողություններից շատերը նույնքան ոտույգ և բնորոշ են, վորքան և բույսերի վրա կատարած դիտողությունները: Այսպես որինակ՝ կկույի առաջին կանչը նույնքան բնորոշ ե և կարեռ, վորքան և նշենու ծաղկելը:

Բույսերից ել պետք ե ընտրել նախ ծառերը, ապա թփերը և խոտաբույսերը: Ծառերը և թփերը մի շարք

տարիների ընթացքում մնում են նույն տեղում և ավելի քիչ են յենթակա զանազան պատահական և յերկրողական պայմանների ազդեցությանը քան խոտաբույսերը: Ռւստի և ծառերն ու թփերն ավելի լավ կանդրադարձնեն կենսակլիման քան խոտաբույսերը:

Կենդանիներից Փենոլոգիայի համար առանձնապես հետաքրքիր են թռչուններն ու միջատները: Թե թռչունները և թե միջատները դիտողության համար շատ հետաքրքիր և Փենոլոգիորեն կարևոր կողմեր ունեն: Բացի այդ՝ նրանք խոշոր գործնական նշանակություն ել ունեն՝ մանավանդ գործատնտեսության համար իբր վնասատու կամ ոգտակար կենդանիները:

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսական պրոցեսներին, այստեղ ել կան բնորոշ յերեւյթներ, վորոշ մը-չակովի բույսերի մի քանի փուլեր՝ ծլերը, թփակալելը, ծաղկելը, լացը և այլն նույնպես անդրադարձնում են: Կլիմայի ազդեցությանը: Միայն թե այստեղ պիտի հաշվի առնել և մարդու միջամտությունը: Գյուղատընտեսական դիտողությունների մեջ մարդու աշխատանքն ել դառնում ե Փենոլոգիայի ուսումնասիրության նյութ: Ի հարկե աշխատանքի ուսումնասիրությունը միայն Փենոլոգիայի միջոցով սպառել չի կարելի, սակայն հնարավոր ե նրա վորոշ մոմենտները Փենոլոգիկ ձևով մշակել և պարզել նրա կախումը կենսակլիմայից:

Բնության մեջ տեղի ունեցող բոլոր պարբերական յերեւյթները վերջի վերջո կախված են յերկրի պտըտվելուց արել շուրջը: Դրա հիման վրա յե, վոր ամեն վայրում նայած նրա աշխարհագրական լայնությանը, նաև ծովից հեռավորությանը և բարձրությանը, ողե-

րեվույթաբանական տարրերը հատուը ձեռվ համադրավում և կազմում են կլիմա: Կլիման ել իր հերթին ազդում է բույսերի և կենդանիների զարգացման ընթացքի վրա: Ահա այդ կապը և կախվածությունը պարզելու համար ցանկալի յե միշտ ել զուգադրել յեղանակը և բնության կյանքի ընթացքը: Այդ պատճառով ել Փենոլոգիկ դիտողություններին զուգընթաց պետք է կատարել առանց գործիքների ողերեւույթաբանական դիտողությունները: Եեթե հնարավոր ե, արժե ունենալ և պարզ ողերեւույթաբանական կայան^{*)} կամ կանոնավոր կերպով ոգտվել տեղում յեղած կայանի տվյալներից: Մեր ծրագրի մեջ մենք հանձնարարում ենք կասարել միայն առանց գործիքների ողերեւույթաբանական դիտողությունները:

Ճիշտ ե, ծրագրիր կազմելիս աշխատել ենք ի նկատի առնել մեր փոքր յերկրի զանազան կլիմայական գոտիները, սակայն այդ տեսակետից այն գեռ կատարյալ համարել չենք կարող: Թերությունները շտկել կարող ե միայն կուտակվող փորձը:

Ծրագիրն առաջարկվում և վորպես մի մշակված որինակ տեղերի գործը հեշտացնելու նպատակով: Նա չի կաշկանդում տեղերում աշխատողներին: Ֆենոլոգը միշտ ել կարող ե ընտրել ծրագրից տեղի պայմաններին հարմար առարկաները և լրացնել վերեսում բերված պայմաններից յելնելով: Այս աշխատանքը վոչ միայն կարելի յե այլ և անհրաժեշտ ե կատարել, վորպեսի Փենոլոգիան կրի գալառադիտական բնույթ, ստանա տվյալներից:

^{*)} Տես ողյերեւույթաբանական դիտողությունների մասին հրատարակած հրահանգը:

յաէ վայրին Հատուկ յեռաճպավորում և թարժացնի ամ-
բողջ գործը:

Բայց, ինչպիսի լրացումների եւ յենթարկվի ծրա-
դիրը, յերբեք չպետք և աչքաթող անել ֆեռոլոգիայի
հիմնական պահանջները. Փենոլոգիկ դիոզուր-յութե-
րը պիտի և լինեն մասսայական, միորինակ, համեմա-
տելի, անընդհատ, միանգամայն հաստատ հայտնի ա-
ռարկաների վրա, ստույգ և անաշխատ :

4. ՖԵՆՈԼՈԳԻԿ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ա. Դիտելի բույսերի ցուցակ

1. Խլոպուզ, ձնծաղիկ, **ծաղկելը**,
2. Խոնճորիկ, **ծաղկելը**,
3. Կաղին, տխիլ, տկողին, պնդուկ, **ծաղկելը**, **տե-
րելը**,
4. Թեղի, կնճճի, **ծաղկելը**, **տերելը**, **պտուղների
հասունանալը**.
5. Նշենի, բադամ, **ծաղկելը**, **տերելը**,
6. Հոն, զողալ, **ծաղկելը** **տերելը**,
7. Ցեղածաղիկ քարմատ (կամ հոանունի) **ծաղ-
կելը**,
8. Կաղնի, **ծաղկելը**, **տերելը**,
9. Կեչի, ցարասի, **ծաղկելը**, **տերելը**,
10. Թիվկի սրատերել, **ծաղկելը**,
11. Անարի, **ծաղկելը**, **տերելը**,
12. Բոխի, **ծաղկելը**, **տերելը**,
13. Սալորենի վայրի, ալուչա, **ծաղկելը**, **տերե-
լը**, **պտուղների հասունանալը**,
14. Շեփորուկ, յասաման, **ծաղկելը**, **տերելը**

15. Ակացիա սպիտակ, **ծաղկելը**, **տերելը**,
16. Թիսենի, **ծաղկելը**, **տերելը**,
17. Կապամախի, բալամբուր, **ծաղկելը** **տերե-
լը**,
18. Ընկույզ, պոպոն, նկոպուր, **ծաղկելը**, **տերե-
լը**,
19. Սգիի, ալոն, **ծաղկելը**, **տերելը**,
20. Սնձենի, արռոսի, **ծաղկելը**, **տերելը**, **պտուղ-
ների լրիվ կարմրելը**,
21. Սիրկելիլ, **ծաղկելը**, **տերելը**,
22. Հաղարճ կարմիր, **ծաղկելը**, **տերելը**,
23. Ցերեֆնուկ կարմիր, **ծաղկելը**,
24. Շագանակ ձիու, ձիակասկ, **ծաղկելը**, **տե-
րելը**, **պտուղների հասունանալը**,
25. Ցաքի, **ծաղկելը**, **տերելը**,
26. Ալվույտ վայրի, դարայոնջա, **ծաղկելը**,
27. Փշատ, **ծաղկելը**, **տերելը**,
28. Լվածաղիկ, **ծաղկելը**,
29. Աղիր, մանդիկ, **ծաղկելը**,
30. Գետնամորի, **ծաղկելը**, **պտուղների հասունա-
նալը**,
31. Մոռ, **ծաղկելը**, **պտուղների հասնելը**,
32. Լորենի, **ծաղկելը**, **տերելը**,
33. Կծոխուր, **ծաղկելը**, **տերելը**, **պտուղների
հասունանալը**,
34. Ցակրի նեղատերակ (ալաժահրի), **ծաղկելը**,
35. Ուղտափուշ, դավարիկյա, **ծաղկելը**,
36. Կապար, **ծաղկելը**,
37. Արթնախոտ **ծաղկելը**:

Բ. Բույսերի նկարագիրը

1. Խլոպուզ, ձևծաղիկ (տես նկար 1) կոճղեսանման պալարով փոքրիկ բույս ե վառ կամ բաց վարդագույն ծաղիկներով։ Մաղիկը կաղմված է պսականման ծաղկապատճանի վեց նեղ թերթիկներից, վեց առեջներից և մեկ վերնադիր վարսանդից։ Մաղկելիս ունենում ե 2-3 տերե, վորոնք ծաղիկը թառամելուց հետո սկսում են արագ մեծանալ։ Բավական խոչը ծաղիկները լինում են հատ հատ կամ մի քանիսը միասին։ Տարածված ե դաշտավայրերում և նախալեռնային գոտում բլուրների վրա, մարգերում, ստեպներում։ Մաղկում ե տաք որերին ձմեռվա վերջերից մինչև գարնան կեսերը։ Յերբեմն հատ-հատ ծաղիկները բացվում են ձմեռվա կեսերին։

2. Խոնկլորիկ (տես նկար 2)։ Բաղմամյա փոքրիկ բույս ե։ Նախ հայտնվում են կողովանման վոսկեգույն դեղին ծաղկեփթությունները՝ բարդ ծաղիկները տերեներով ծածկված ցողունի վրա, ապա՝ տերեները։ Արանք բավական խոչը սկսումելու ունեն, վորի վերեկ յերեսը մերկ ե և մուռ կանաչ, իսկ տակինը՝ թալու։ Տարածված ե դաշտավայրերում և նախալեռնային դոսում, ձորակների լանջերին, առուների և ճանապարհների մոտ, գլխավորապես խոնավ կավահողերի վրա։

Մաղկում ե ձմռան վերջերին։ Մաղկելուց հետո արագ զարդանում են թռչող պտուղներու։

3. Կաղին, տլյիլ, տլողին, պնդուկ, վոչ բարձր միատուն ծառ կամ թռուփ ե։ Մաղկում ե նախքան տերելը ձմեռվա վերջերին և կամ գարնան սկզբներին։ Փոչի արձակելուց առաջ կատվիկները (արական ծաղկափթությունները) շատ արագ յերկարում են։

Իգական ծաղիկները նկատելի յեն դառնում, յերբ նրանց վառ կարմիր սպիները բողբոշից դուրս են գալիս։ Նույն գարնանը կազմակերպվում են հաջորդ տարվա արական ծաղկափթթությունները փոքր և ամուր կատվիկների ձևով։ Տարածված ե նախալեռնային ըլջաններում, անտառներում, թփուտների մեջ և այգիներում։ Կարող ե պատահել և դաշտավայրերում։

4. Թեղի, կնճնի, տերեներն անհավասարակողմեն և ունեն մոտ մեկ սանտիմետր յերկարության կոթուն (մյուս տեսակներին ավելի կարճ ե)։ Բնում ե դաշտավայրերում և նախալեռնային դոսում անտառների մեջ, լանջերին և ձորերում։ Մաղկում ե վաղ զարնանը, տերեներուց առաջ։ Շուտ համող պտուղները թռչող են և հասունանալով սկսում են անմիջապես ցրվել։


5. Նշենի, բաղամ, բանուժ և դաշտավայրերում, իր մշակովի կամ վայրիացած ծառ։ Սովորական և հանրածանոթ բույս ե։ Մաղկում ե վաղ գարնանը տերեների բացվելու հետ կամ մի քիչ շուտ։

6. Հնի, զողալ, հանրածանոթ ցածր ծառ ե և տարածված ե նախալեռնային և ստորին լեռնային ըլջաններում։ Բնում ե անտառներում և թփուտներում։ Դեղին ծաղիկները խմբված են հովանոցի ձևով և պատված են քառաթերթ գունավոր ծածկոցով։

Մաղկում ե վաղ գարնանը տերեների բացվելուց առաջ, բայց պտուղները հասունանում են շուտ ուշ։

7. Թգարմատ յեղածաղիկ, (տես նկար 3) բնում ե դաշտավայրերում և նախալեռնային դոսում, թփուտներում և առհասարակ խոնավ տեղերում։ Մյուս յեղածաղիկներից տարբերվում ե չկտրտված և թռույլ ա-

տամնավոր տերևներով, 6-8 դեղին թերթիկ ունեցող ծաղիկներով և մի փունջ յերկարավուն հաստացած արմատներով։ Մյուս տեսակների տերևները կտրված են,



ԹՁԱՐՄԱՏ ՅԵՂԱՍՍԱԴԻԿ

պատկանման թերթիկները թվով 5 հատ են և արմատները հաստացած չեն։ Մնացած հատկանիշներով նման ե մյուս տեսակներին՝ ունի բազմաթիվ առեջներ և վարանդներ։ Ծաղկում ե գարնան առաջին կեսին։

8. Լեռնային կաղթի, Այս ծառն աճում է լեռնային շրջանների անտառներում։ Կաղնու մյուս տեսակներից ասարբերվում է նրանով, վոր սրա դալար ընձյուղները ինչպես և յերկտասարդ տեղեների ցածի յերեսը ծածկված էն թավշանման մաղիկներով։ Հին տերևների վրա թափը լավ չի նկատվում։

Ծաղկում ե գարնան կեսերին։

9. Կեչի, ցարասի, բարձր և միջին լեռնային գոտիների անտառներում լանող միատուն ծառ կամ յերբեմն թուփ է։ Բնի և հաստ ճյուղերի կեղևը սպիտակ կամ դեղնավուն է։ Դալար ընձյուղները թավշապատ-գեղձային են, պտղատու ճյուղերը մերկ են և փոքրիշատե գեղձեռվ ծածկված։ Տերևները լայն բեկեռաձև, շեղանկյուն կամ յեռանկյուն են, ծայրը սրված, տերևայեղբը կրկնակի սղոցաձև ատամներով։ Արական կատվիկներն առաջանութ են նախորդ տարվա աշնանը, իսկ իգականը ծաղկելիս՝ գարնանը։

Ծաղկում ե գարնանը։

10. Սրաստերև թիվի, միջին բարձրության և ուղղաձիգ բնով ծառ է։ Տարածված է գլխավորապես լեռնային գոտում։

Ծաղկում ե գարնանը տերևելու հետ միաժամանակ։

11. Անարի, բարձր ծառ է, միջին և բարձր լեռնային գոտիներում կազմում է անտառներ։ Միատուն է յին գոտիներում կազմում և անտառներ։ Միատուն կատարական ծաղիկները գնդաձև և յերկարացողուն կատարական ծաղիկները 2-3-ական նստած են վիկներով։ Իդական ծաղիկները 2-3-ական նստած վիկներով պատյանի ներսում։ Հետագայում այս պատյանի վրա դրսի կողմից փշանման թեփուկներ կան։ Բողոքները յերկար և նեղ են։

Ծաղկում և գարնանը : Դիտել թե արական և թե ի-
գական ծաղիկները :

12. Բոլխի, վոչ շատ բարձր ծառ ե, միջին լեռնային
գոտում անտառներ ե կազմում, կանուց տարրերվում
ե նրանով, վոր սրա պտղի ծածկոցը հարթյեղը ե, կամ
մի քանի հատ խոչոր ատամներ ունի :

Ծաղկում և գարնանը : Դիտել թե արական և թե ի-
գական ծաղիկները :

13. Սալորենի վայրի, ալուչա, փոքր ծառ ե, փըռ-
ված և յերբեմն ել փշոտ ճյուղերով : Տարածված ե մի-
ջին լեռնային դաշտավայրերի գոտում՝ անտառներում
և թփուտներում : Սրա ծաղիկները բավական փոքր են,
նստած են զույգ-զույգ և յերկար կոթունների վրա :
Պտուղները գնդածե են կամ բեղին :

Ծաղկում և գարնան առաջին կեսին տերևելու հետ
միաժամանակ կամ մի փոքր չուտ :

14. Եեփորուկ, յասաման, աճեցնում են պարտեզ-
ներում իրը զարդարույս : Եեփորուկը թուփի ե բաց կար-
մրակապույտ կամ սպիտակ ծաղիկներով : Դիտելու հա-
մար պետք ե ընտրել մանր և կարմրակապույտ ծաղիկ-
րով բույսերը :

Ծաղկում և գարնան կեսերին :

15. Ակացիա սպիտակ, միջին բարձրության ծառ
ե, աճեցնում են քաղաքներում և այլ տեղերում, պար-
տեզների մէջ կամ փողոցներում : Տերենները փետրածե
բարդ են : Սպիտակ և հոտավետ ծաղիկները կազմում են
խոչոր կախված ծաղկափթթություններ :

Ծաղկում և գարնան կեսերին :

16. Թխենի, փոքր ծառ ե տարածված ճյուղերով :
Տերենները ելիպսաձե են, սրածայր սղոցայեղը : Ծաղիկ-
ները կողքի յերկար և կախված վողկույղներով, սպի-

տակ և հոտավետ : Պտուղները գնդածե և սե են : Մեզ
մոտ քիչ ե տարածված (Դարաշիչագի մոտ կա) սակայն
դիսողության համար հետաքրքր ե, վորովհետեւ կա
միջաղգային ծրագրում :

17. Կաղամալխի, բալամբուր, բարձր ծառեր են ուղ-
ղաձիբ բնով : Կեղեւ կանանչ-մոխրագույն ե, միամյա
ճյուղերը՝ մուգ: Բողբոջները կոնածե են, սուր, մուգ
կարմրավուն և կպչուն: Ազգակից բարդուց տարբեր-
վում ե սաղարթի և տերեւի ձեռվկ: Բարդին ավելի բարձր
ե, ձգված և ճյուղերն ել շատ մոտ են դլխավոր բնին և
վեր են բարձրանում: Կաղամախին ավելի փռված ճյու-
ղեր ունի: Տերեւ կլորավուն ե, յեղը բլթակածե
կարգած, մինչդեռ բարդու տերեւ յեռանկյուն էամ
շեղանկյուն ե:

Ծաղկում և գարնանը :

18. Ընկույզ, նղոպուր, պոպոք, կակալ, բավական
բարձր ծառ ե, տարածված ե անտառներում վայրի վե-
ճակում և այդիններում : Միատուն բույս ե :

**Ծաղկում և գարնանը նախ քան տերեւելը կամ չա-
մարյա տերեւիլու հետ միաժամանակ :**


19. Սզնի, ալոն, թփեր կամ փոքր ծառեր են սովո-
րաբար փշակիր: Տերենները բլթակավոր կամ կտրաս-
ված են և կոթունի յերկու կողքերն ունեն տերեւակից
կանաչ թերթիկներ: Ծաղիկները սպիտակ են և հոտա-
ված պտուղները կարմրի են: Մեզ մոտ շատ տարածված
վետ, պտուղները կարմրի են: Սրբ մոտ շատ տարածված
է դիսողության կից չորացնել նայել տերեված
ու ծաղկած ճյուղերը:

20. Անձենի, արոսի, (տես նկար 4): բարձր լեռնե-
րում տարածված վոչ բարձր ծառ ե: Ունի անզույգ փե-
ռում տարածված վոչ բարձր ծառ ե:

տրամել բարդ տերեվներ, խիտ վահանիկներով խըթքած սպիտակ ծաղիկներ և վառ կարմիր պտուղներ:

Ծաղկում ե գարնան յերկրորդ կիսին, պտուղները հասունանում են ամառվա վերջերին:

21. Սերկեվիլ. Հանրածանոթ ծառ է: Մեզ մոտ բնում ե վայրի կամ վայրենացած վիճակում: Շատ տարածված է նաև սիրա մշակությունը:



22. Կարմիր ազարն, մեր անտառներում բավական տարածված թուփ ե անփուշ ճյուղերով: Տերևները բլթակավոր և ատամնավոր են, տակից թափուտ Ծաղկավողկույզը բաղմածաղիկ սկզբում թեքված ապա կախված: Պտուղները կարմիր: Այս թուփը մեզ մոտ հայտնի յե նաև մշակության մեջ:

30

23. Կարմիր յերեքնուկ, սիրի-սիրի, խնձորածագիկ. տարածված ե բարձր և միջին լեռնային գոտիներում, բայց սպատահում ե և ամենուրեք:

Բազմամյա խոտաբույս է: Ծաղկում ե ամառվա սկզբներին:

24. Չիու շագանակ. խոչոր թաթածե բարդ տերեներով ծառ է, իր զարդարույս աճեցնում են պարտեզներում, փողոցներում և այլուր: Սպիտակ ծաղիկները կազմում են ուղղաձիգ կանգնած բրգածե ծաղկափթթություններ: Պահաժերեթիկների վրա կան դեղին բըծեր, վորոնք փոշոտումից հետո կարմրում են: Կանաչ փշածածկ պտուղների մեջ գտնվում են խոչոր, փայլուն, դարչնագույն սերմերը:

Ծաղկում ե գարնան վերջերին և ամառվա սկզբներին:

25. Ցախի. աճում է ցածրադիր վայրերում և մասամբ ել նախալեռնային գոտում լանջերի վրա, անապատներում և չոր բլուրներին. փշոտ թուփ ե կլորավուն ելիպսաձեւ տերեներով, մանր, դեղնավուն անպաճույն ծաղիկներով և շրջանաձև տափակ յեղրավոր պտուղներով: Փշերը նստած են տերենի հիմքում յերկուական, դրանցից մեկն ուղիղ ե, մյուսը կարթակ ծոված: Ծաղկում ե գարնան վերջերին և ամառվա սկզբներին:

26. Վայրի առվուտ. առվուտի զանազան վայրի տեսակներն աճում են ամենուրեք՝ ստեպներում, մարդերում, չոր լանջերին, թփուտներում: Նրանց բնորոշ հատկանիշներն են՝ յեռմանյա բարդ տերևները, վորոնց ծայրի տերենիկն իր հատուկ կոթունն ունի և ծաղկների կարծ վողկույզները: Ծաղիկները լինում են կապույտ, բայց դեղին կամ սպիտակ: Սրանց պտուղը

31

մանդաղաձև ծոված կամ պտուտակաձև վոլորված պատիճ ե:

Ծաղկում ե ամբողջ ամառ :

27. Փշատ . հանրածանոթ ծառ ե , աճում ե թե վայրի դրությամբ և թե այգիներում :

Ծաղկում ե գարնան վերջերին և ամառվա սկզբներին :

28. Լվածաղիկ . աճում ե լեռնային մարգերում ու թփուտներում : Ծաղկափթթությունը կողով ե , ներսի մանր ծաղիկներն առանց լեզվակի յեն և գեղին , յեղբինը լեզվակավոր են և վարդագույն (բաց վարդագույնից մինչև մուգ բոսորագույն) : Սրանց ծաղիկները ժողովում են «պարսկական փոշի» պատրաստելու համար :

Ծաղկում ե ամառվա կեսերին :

29. Աղիք , մանդիկի , (տես նկ. 5) խոնավ լեռնային մարգերի բազմամյա բույս ե : Տերեներնելիպսանըշտարաձև են :

30. Գետնամորի . հանրածանոթ բազմամյա փոքրիկ բույս ե : Ծաղկում ե ամառվա սկզբներին :

31. Մոռ . Այս կիսաթուփը տարածված ե լեռնային շրջանների անտառներում : Յողուններն ուղղաձիգ կանգնած են բարակ և ուղիղ վեցերով : Ցածի տերեները փետրաձև են՝ 2—3 զույգ տերեկիկներով , վերևի տերեները յեռմանյա յեն և տակից ծածկված են սպիտակ թավով : Քիչ ծաղիկ ունի , վորոնք սպիտակ են :

Ծաղկում ե ամառը :

32. Լորենի . հանրածանոթ ծառ ե : Տերեների տակի յերեսը մօխրականաչավուն ե , մաղիկներ կան միայն ջղերի անկյուններում :

Ծաղկում ե ամառը :

33. Կծովուր . տերեներն ունեն փշաձև տերեկակիցներ : Դեղին ծաղիկները խմբված են կիսականգում կամ կախված վողկույզներով : Պտուղները կարմիր են :

Ծաղկում ե ամառը :

34. Ցակրի նեղատերև , (տես նկ. 6 և նկ. 7) : Ցածր , փշոտ թուփ ե , տարածված ե բոլոր գոտիների չոր տեղերում , անտապատներում : Տերեները գծաձև կամ նըշտարաձև են , աստիճանաբար նեղանալով անցնում են կարճ կոթունի , ճյուղի վրա նստած են փնջերով : Ծաղիկները յերկոտուն են , փնջերով խմբված , կանաչավուն , քառմասնյա :

Ծաղկում ե գարնան վերջերին և ամառվա սկզբներին :

35. Ուղտափուշ , դավաթիքյա , տարածված ե գաշտավայրերում և նախալեռնային շրջաններում : Չորասեր փշոտ կիսաթուփ ե , աճում է չոր լանջերի և կավոտ հարթավայրերի վրա : Տերեները պարզ են :

Ծաղկում ե ամառը :

36. Կապար , կապրախուռ . տարածված ե հարթավայրերում և նախալեռնային շրջաններում : Գետնատարած փշոտ կիսաթուփ է խոր դնացող արմատներով : Չորասեր է , կարելի յե հաղիկել անապատներում և կավոտ ձորակներում ու գաշտերում : Տերեները կլորավուն են փշաձեղ ծաղկակիցներով : Ունի խոշոր սպիտակ կամ վարդագույն ծաղիկներ : Սերմնարանը նստած է յերկար կոթի վրա : Պտուղը կարմիր է , ճյութալի , հասունահալիս բացվում է :

Ծաղկում ե ամառը :

37. Արթթախոտ . (տես նկ. 8) տարածված ե գաշ-

Պ. Յուցմունքներ բուսա-ֆինոլոգիկ
դիտողությունների համար

Ի՞նչպես կատարել բուսա-ֆինոլոգիկ գիտողությունները։ Ֆենոլոգներից մի քանիսն առաջարկում են ծաղկելու, տերևելու կամ պտղի հասունանալու սկիզբը համարել առաջին ծաղկի բացվելը, տերեկի յերեալը կամ պտղի հասունանալը։ Այսպիսի մուեցում ճիշտ չէ, քանի վոր հաճախ հատ ու կենա բույսեր ճիշտ ել նորմալ ժամանակից շատ վաղ ծաղկում կամ տերեալ են, նույնիսկ ձմռնանը կամ աշնանը։ Այդ ժամկետը ծաղկելու կամ տերեկելու սկիզբը համարել չենք կարող։


Զարգացման փորձե շրջանի սկիզբը պետք է համարել այն առաջին ծաղկի բացվելը, վորից հետո առանց նկատելի ընդհատումների բացվում են նույն տեսակի բույսերից շատերի ծաղիկները։ Այն դեպքում ել պետք է նշանակել առաջին ծաղկի բացվելու որը։ Յեթե նրան չհետեւն մյուս ծաղիկները, ասաւ ընդհատումից հետո նորից պետք է նշանակել առաջին ծաղկի բացվելը՝ մինչև վոր այդ մոմենտն իսկապես ծաղկելու սկիզբը կլինի։ Ստույգ լինելու տեսակետից պետք է նշանակել նաև լանջը (արկառնի, ծակ), թեքությունը, հողի խոնավությունը, բուսականության բնույթը (մարգ, անտառ, թփուտ, դաշտ) և բոլոր այն անհրաժեշտ պայմանները, վորոնք կարող են ազդել ավելի տեղի բույերի ծաղկելու վրա։

Բացի այս՝ գիտողություններն ստույգ կատարելու համար պետք է պայմանավորվենք, թե ծաղկել, տերեկել և կամ բույել գարգացման մի այլ մոմենտ անվանելին։ պիտի հասկանանք։


Մադկել ասելով հասկանում ենք ծաղիկների բաց-



ԱՐՔԱՆԵՐ



ՅԵՎ ԱՐԱԿԱՆ (6) ՅԵՎ ԿԳԱԿԱՆ ՀԵՂԱԿԱՆ



ՆԵՐԱՏԵՐԵՎ ՅԱՄՐ ԿԳԱԿԱՆ

տավայրերի և նախալեռնային գոտու չորային քարքարոտ վայրերում։ Ցածր խոտաբույս և կապույտ ծաղկեներով։ Բաժակի վրա կպչուն դեղային մաղիկներ կան։ Ծաղկում և ամառվա վերջերին կամ աշնան սկզբներին։

վելը, յեթե նրանք գունավոր ծաղկապատյան ունեն: Իսկ յեթե նրանք գունավոր ծաղկապատյան չունեն (կազմին, ընկույզ, կեչի), այդ գեաքում պետք ե նշանակել փոշի արձակելու առաջին որը: Միասեռ ծաղկների դեպքում պետք ե նշանակել արական ծաղկների փոշի արձակելը և իգականների սպիների յերեալը (կաղին):

Տերեւել ասելով կարելի յե հասկանալ յերկու մոմենտ՝ տերեւների կանաչ ծայրերի յերեալը բողբոջների միջից և առաջին տերեւների ազատվելը բողբոջի թեփուներից: Առաջին մոմենտն ավելի հեշտ և ստույգ ե դիտվում: Ցանկալի յե գրի առնել և յերկորդ մոմենտը:

Պտույլների հասունանալը հեշտ վորոշվում ե այն բույսերի համար, վորոնց պտուղները հասունանալուց հետո սկսում են անմիջապես թափվել (թեղի, ձիու շազանակ) կամ խիստ կերպով գույնը փոխում են (սալոր): Մյուսների վերաբերմամբ այդ մոմենտը վորոշել շատ դժվար է, ուստի և ծրագրի մեջ չի մտցված:

Տերեւաբափն ել հետաքրքիր կենսաբանական մոմենտ ե, վորի սկիզբը վորոշելը նույնակես բավականին դժվար է: Ցանկալի յե գրի առնել, թե տերեւների գունափոխության և թե թափվելու սկիզբը:

Մեր ծրագրի մեջ բերված բույսերից չատերը հանրածանոթ են: Վոյ հանրածանոթների մասին ել (ինչպես և հանրածանոթների) բնորոշումներ^{*)} և նկարագրեր են բերված, վորպեսզի տեղում աշխատողը կարողանա ըստ այդ բնորոշումների ճանաչել անվանված

^{*)} Այդ բնորոշումները խիստ գիտական չեն: Այդպիսիներից խուսափել ենք, վորովհետև գրանք մասսայական դիտողի համար մատչելի չեն:

բույսը: Սակայն, ի նկատի ունենալով, վոր կովկասում և մասնավորապես Հայաստանում շատ նոր տեսակներ կան, վորոնց չփոթում են յերեւմն նույնիսկ բուսաբանները և անկախ գրանից սխալ միշտ ել կարող ե լինել, իորհուրդ ենք տալիս դիտած բույսի նմուշ վերցնել և չորացնել: Զորացնելու համար պետք ե վերցնել ամբողջ բույսը ծաղիկներով և արմատով, յեթե ի՞նչորկե նա փոքր է: Ծառերից, թփերից և մեծ խոտաբույսերից պետք ե վերցնել տերեված և ծաղկած նյուղը: Այս դեպքում դիտողությունը կարելի յե միանդամայն ստույգ և թյուրիմացություններից ազատ համարել:

Ծրագրում դիտողության համար 37 բույս ե բերված, բայց բոլորն ել ամեն տեղ չեն բանում: Յուրաքանչյուրը դիտող այդ ցուցակից պիտի ընտրի այն բույսերը, վորոնք կան իր ըրջանում և մատչելի յեն դիտողության համար:

Ցանկալի յե բնության որագրում նշանակել ծրագրի մեջ չմտած բայց աչքի ընկնող բացառիկ յերեվույթները: Արտակարգ յերեվույթների խմբին են պատկանում՝ աշխանը յերկրորդ անգամ ծաղկելը, վաղաժամ տերեվաթափը, պտուղների թափվելը, ցրտահարությունը, վնասատուների մասսայական ավերածությունները և այլն: Առհասարակ սովորական դիտողությունները նշանակալիս ել պետք ե հիշել թե յերեվույթը մասսայական ե թե՝ մասնակի: Այսպես անտառների համար հայտնի յեն «սերմաշատ» տարիներ, վորոնք վորով հաջորդում են սերմասակավ տարիներին:

Բույսերի հայերեն անունները վերցրված են մեծ մասամբ ժողովրդական բարբառներից, այնպես վոր

նրանցից մի քանիսը գուցե մի քանի ըրջանների համար հասկանալի չլինեն: Ռւստի ցանկալի յէ ամեն բույս տեղում ստուդել և գրի առնել նրա անունը (կամ անունները) տեղական բոլոր լեզուներով ու բարբառներով: Ստուդումը հեշտացնելու համար գրքի վերջում բերված են նաև ուսերեն և լատիներեն անուններ:

Այդ անունների հնորհիվ դրականության մեջ կարելի յէ տեղեկություններ հավաքել տվյալ բույսերի կենսաբանական և այլ հատկությունների մասին և այդպիսով ավելի խորացնել ու խմաստալի դարձնել բուսաֆենոլոգիկ դիտողությունները:

Դ. Թուչնա-Փենոլոգիկ դիտողություններ

Գ ա բ ո ւ ն .

1. Գիշատիչ թուչունների անցնելը (սկիզբը, մասայականը, վերջը):

2. Սերմնաքաղի և ճայակի չուն և անցնելը:

3. Կոռունկների անցնելը (առաջին և հետեւյալ բոլոր յերաժնները):

4. Արագիլի վերապարձը:

5. Հոպոպի վերապարձը:

6. Գյուղի ծիծեռնակի վերապարձը (առաջինները, մեծ մասը, ուշացածները):

7. Բաղաքի ծիծեռնակի վերապարձը:

8. Լորի առաջին կանչը:

9. Կկույի առաջին կանչը:

10. Մանգաղաթեվի վերապարձը (առաջինները, մեծ մասը):

11. Տամրակի առաջին կանչը:

12. Սևագլուխի վերապարձը:

13. Շամփրուկի վերապարձը:

14. Ներկարարի վերապարձը:

15. Մեղվակուկի վերապարձը (առաջինները, մեծ մասը):

16. Պիրուկի վերապարձը:

Ա մ ա ռ .

1. Հոպոպի կանչի դադարելք:

2. Կկույի » » »

3. Լորի » » »

Ա շ ո ւ ն .

1. Կոռունկների անցնելը (առաջին և հետեւյալ յերաժնները):

2. Գյուղական ծիծեռնակի չուն (անցնող յերաժնները):

3. Բաղաքի ծիծեռնակի չուն:

4. Մանգաղաթեվի չուն.

5. Լորի վելքի չուն:

6. Մեղվակուկի չուն (և անցնող յերաժնները):

7. Գիշատիչ թուչունների անցնելը:

8. Սերմնաքաղի և ճայակի անցնելը և վերապարձը:

Զ մ ե ռ .

1. Լեռնային յեղջրակիր արտուտի հայտնվելը:

2. Վորմնագնացի հայտնվելը:

ՑԵ. Ծրագրի թացատրական

Ծրագրում բերած դիտողությունները հեշտացնելու համար բերում ենք մի քանի անհրաժեշտ տվյալներ թուչունների յերեալու տեղի և ժամանակի մասին:

1. Գիշատիչ թոշումներ, Մեր յերկրի վրայով անցնող գլխավոր գիշատիչներին են սև ցինը և յերեք տեսակի մեկնաբազիներ՝ դաշտային, մարդի և ստեղի: Սըրանք անցնում են ողվորաբար գարնանը՝ մարտի սկզբը ներից մինչև ապրիլի վերջերը և յետ են դառնում աշնանը՝ ողոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի վերջերը:

2. Կոռուկ, Անցնում և մարտի կեսերից մինչև ապրիլի կեսերը: Յերամը կազմվում է անհավասարակողմ սուր անկյան ձևով: Թուչելիս կոռուկների վիզը և վուգերը ձգված են լինում, այդ պատճառով ել այդ թըռչունները խաչի ձևով են յերեսում: Կոռուկներին կարելի յե ճանաչել և նրանց կոկոցից: Վերադառնում են սեպտեմբերի կեսերից մինչև հոկտեմբերի կեսերը:

3. Հապալ, Վերադառնում և մարտի վերջերից մինչև ապրիլի կեսերը: Հանրածանոթ թոշուն է: Բնորոշ է սրա կանչը, վորը մոտավորապես այսպես և հնչում՝ «ոպոպ» կամ «ոպոպո»: Բնակվում ե բաց դաշտերում, անտառների յեզրերին, այդիներում, մարդու բնակավայրին մոտ, քարերի մեջ: Կանչում է գալուց մի քանի որ անց:

4. Ծիծենակ գյուղական, Վերադառնում և ապրիլին: Քաղաքի ծիծենակից տարբերվում է հետեւյալով, սրա մեջը մուգ կապույտ է, կուրծքը սպիտակ, վիզը մուգ կարմիր, պոչը՝ յերկճյուղ: Թոփչքը սրբնթաց է: Բունը լինում է գերանների և առհասարակ փայտեղենի վրա: Զիկց մի քանի որ առաջ մեծ յերամներ ե կազմում, վորոնք մի քանի որ նույն տեղում մնում են (տանիքի վրա, յեղեգնուուում): Զվում են յերամով: Չուն նշանակելու համար նախ պետք է գտնել յերամի տեղը, հակառակ դեպքում ժամկետի վերաբերմամբ կարելի յե սիսալիք: Զվում են սեպտեմբերին:

5. Ծիծենակ քաղաքի, նախորդից փոքր և պոչը վուշ յերկճյուղ: Կուրծքը, փոքր և վերնագին սպիտակ են թունը լինում և քարաշեն պատերի վրա: Մնացածով նման ե նախորդին:

6. Լոր, գալիս և ապրիլի յերկրորդ կեսերին: Միքանի որից սկսում է կանչել՝ «պիտ պաղամ»: Կանչը շարունակվում է մինչև ողոստոս ներառյալ: Ապրում է դաշտերում և խոտերի մեջ: Զվում է սեպտեմբերին յերբեմն ալիլի ուշ՝ հոկտեմբերին կամ նույնիսկ նոյյեմբերին:

7. Կրիու, վերագառնում է ապրիլի յերկրորդ կեսերին: Մեջքը գորշ է, տակը բաց գորշավուն՝ «և ընդլայնական բծերով»: Բնորոշ ձայն է համում՝ «կու-կու», վորը լսվում է նաև հեռվից: Միրում է ընդհատ անտառներ և պտղատու մեծ այլիներ: Պատահում է նաև մենակ աճող ծառերի վրա: Գալուց մի քանի որ հետո սկսում է կանչել, վաստ յեղանակին ալիլի ուշ և սկսում կանչել: Կանչել դադարում է հունիս-հուլիս ամիսներին: Զվում է սեպտեմբերին:

8. Մանկաղարև, մաքալուկ, վերադառնում և ապրիլի վերջերին: Ծիծենակից մեծ է, մանդաղանման նեղ թեփեր ունի, գույնը թուխ է, միայն վիզն է սպիտակավուն: Թոփչքը սրբնթաց է, ձայնը սուրը «վզզզ-վզզզ»: Գալիս է մեծ յերամներով: Բունը լինում է շատ բարձր չենքերի, աշտարակների, յեկեղեցիների և նույնիսկ ծառերի վրա: Զվում է ողոստոսի վերջերին և սեպտեմբերի սկզբներին:

9. Տատրակ, հայտնում և ապրիլի վերջերին և սայիսի սկզբներին: Աղավնու նման է, բայց ալիլի նուրբ և փոքր է: Թեկերը գարշնագույն են, վզի յերկու կրղքերին ու սպիտակ բնորոշ բծեր կան: Բնակվում է

ի ի տ կանաչի մեջ և սովորաբար չի յերպում : Կանչում ե այսպես՝ «Տուրքը-տուրքը-տուրքը» : Հեռվից շատ լավ լսվում է : Սիրում ե վոչ խիտ անտառներ : Յերեսն բակվում է թփուտներում : Նրան կարելի յէ տեսնել հեռագրաթերի վրա նստած : Զվում է սեպտեմբերի սկզբներին :

10. Դրախտապան սևագլուխ, ձնձուկի չափ ե : Արույի կուրծքը և փորը վառ դեղին են, մեջքը ժանդակարմիր, դլուխը սև : Եղն ավելի դժգույն ե՝ մեջքը թուխ, փորը գեղնալուն, կուրծքը բաց թուխ : Սիրում ե լեռների թփակալած չոր լանջեր (մանավանդ վորտեղ ցաքին ե բանում) : Գալուց հետո նրանց կարելի յէ տեսնել թփերի վրա նստած յերգելիս :

11. Շամփրուկ, վերադասնում ե ապրիլի վերջերին : Ճնճուկից մի փոքր մեծ ե : Մեջքը թուխ կարմիր ե, կուրծքը և փորը գորշ, դլուխը մեծ և նույնապես գորշ, աչքերի վրայով այնում ե սև շերտ, ճակատը և գաղաթը տափակ են : Կոռոցի վերին մասը դեպի ցած ե կեռացած : Գալուց անմիջապես հետո նստում ե ծառերի և բարձր թիերի կատարներին և այնտեղից դիտում : Այս դիրքով նա փոքր դիշատիչ է հիշեցնում : Յերեսն տեղից պոկվում ե, մոտով թոշող միջատին վորտում և նորից իր նախկին տեղում թառում :

Զվում է ոգոստոսի կեսերից մինչև վերջերը :

12. Ներկարար, հայտնվում ե ապրիլի վերջերին : Բունը շինում ե բաց տեղերում : Աղավնու չափ ե, բայց իր կազմվածքով ամելի շուտ ագռավի յէ նման : Վառ կանաչալուն յերկնադույն ե, ժանդապարչնագույն մեջքով, մանուշակագույն ուսերով և սև ծայրերով յերկնագույն թերով : Թեերի տակի գույնը պարզ յերեսում ե թուշելու ժամանակ :

Սիրում ե համ ու կենա ծառերով բացուտներ, մասնապարներ, կալու ծորակներ : Հաճախ թառում ե հեռագրաթերի վրա : Զվում է սեպտեմբերի սկզբներին :

13. Մեղվակուլ, վերադասնում ե ապրիլի վերջին կամ մայիսի սկզբներին : Փետրավորումը վերեկից կարմրադարչնագույն և ծայրերին կանաչ յերկնագույն : Բացի վոսկեգույն կոկորդից տակն ամբողջապես կանաչավուն-յերկնագույն է : Կոկորդի վրա սև գինոց կա : Կը տուցը յերկար և և մի փոքր կեռ : Զայնը բնորոշ ե, «պերպլ-պերպլ», յերեմն լավում է մեղմակուլի ոգում թռչելու ժամանակ : Բունը շինում ե գետնի և կավեպատերի մեջ : Յերեսն հագագումը են մեղմանոցի մոտ և մեղու յեն վորտում : Ապրում են զաղութներով : Զվելիս այնքան բարձր են թոշում, վոր հաղիկ նրանց ձայնն ե միայն լավում :

Զվում է սեպտեմբերի յերկրորդ կեսերին :

14. Պիրոլ, վերադասնում ե մայիսի սկզբներին : Մեծությամբ ժեռի չափ ե : Արուն վառ դեղին և միայն թերը և պոչի հիմքն ու միջին մասն են սև : Եգերը ձիթապալականաշագույն են թուխ թերով : Սովորաբար նստում են խիտ ծառերի կատարներին, ուստի և հետությամբ աչքի չեն ընկնում : Ունեն սրնգի ձայն («Փիտլիու») : Ապրում և ընդհատվող սաղարթավոր անտառներում, այդիներում, պուրակներում և նույնիսկ քաղաքային այգիներում : Զվում է սեպտեմբերին սկզբներին :

15. Աերմնաքաղ, տուլաշ, թափառում ե դաշտավայրերում գարնանը, աշնանը, ձմռանը : Աև ագռավից տարբերում գարնանը, աշնանը, ձմռանը : Ագռավից տարբերում ե կոռոցով, վորի հիմքը, ինչպես և այլը ու վզի առջենի մասը մերկ են և բաց գորշագույն :

16. Հայակ, նստակյաց թուշեն ե, բունը շինում է
բարձրադիր տեղերում, ձմեռում է հովիտներում: Ագ-
ռավամաններից ամենից փոքրն ե: Ամբողջովին սև ե,
վզին ունի բաց մոխրագույն յերբեմն սպիտակավուն
վզկապ: Ունի բնորոշ սուրբ ճիչ՝ «կյու-կյու-կյու»:

17. Արտուր լեռնային յեղջրավոր, բունը շինում է
լեռներում: Խիստ ձմեռներին իշնում է գետերի հովիտ-
ները (սոլորաբար դեկտեմբերին-հունվարին): Արտա-
քինից նման է սովորական արտուրին, մեջքը թուխ
դորշ ե, կուրծքը և փորը սպիտակավուն: Կտուցից աշ-
քերի վրայով դեպի ականջի մասը և ավելի ցած դեպի
կուրծքը սև շերտ և գնում: Ամենաբնորոշ հատկանիշն
այն ե, վոր ծոծրակի յերկու կողքերին սև փետուրների
սրածայր փնջեր կան, վորոնք յեղջուրներ են հիշեցնում:

18. Վորմնագնաց, բունը շինում է լեռներում: Ձմը-
ռանն իշնում է դաշտավայրերը: Մոխրագույն ե, թե-
վերն ավելի մուգ են վառ կարմիր և սպիտակ բծերով:
Բզանման կտուցը բարակ և յերկար ե: Թեւերը քիչ բաց
նա կարողանում է մագլցել միանդամայն հարթ և ուղ-
ղաձիգ պատերի վրա: Սիրում է ժայռոտ տեղեր, ան-
դունդներ, քարե շենքեր: Թիթեռի նման ճախրող թոփչք
ունի:

19. Արագիլ, բավական խոշոր հանրածանոթ թուչուն
ե: Վերադառնում է վաղ գարնանը: Բունը շինում է
բնակելի տեղերի մոտ բարձր ծառերի և յերբեմն նաև
տանիքների վրա:

Զ. Ցուցմունքներ թուշնա-փենոլոգիկ դիտադուք-յումների
համար

Թուշնա-ֆենոլոգիկ դիտողություններ կատարելիս
պիտի ի նկատի առնել հետևյալը:

1. Անցնելու և վերադարձի դեպքում պետք ե նշա-
նակել առաջին անցնող կամ վերադարձող յերաժները,
մեծ մասի վերադարձը, վերջինները, ուշացածները:

2. Ցանկալի յե նշանակել վերադարձի վոչ միայն
որը, այլ և ժամը (պետք ե հիշել, վոր շատ թուչուններ
դալուց անմիջապես հետո դեռ չեն յերեսում, այլ պահ-
վում են կամ վորոշ ժամանակ ձայն չեն հանում):

3. Ցանկալի յե նշանակել անցնող և վերադարձող
թուչունների խմբերի մեծությանը (հատ-հատ, զույգե-
րով, փոքր յերաժներով, մեծ յերաժներով): Ցերբեմն
բով կուրծքը յե նշանակել և թուչունների թիվը (կոռուկ-
կարելի յե նշանակել և թուչունների թիվը (կոռուկ-
ներ):

4. Ցանկալի յե գծադրել անցնող յերաժների ձևե-
րը (բաղերի, կոռուկների, սերմաքաղների):

5. Կարեռը ե նշանակել թոփչքի ուղղությունը՝ վոր
կողմից և դեպի ուր են թուչում (կողմնացույցով ճշտել,
թոփչքի ուղղությունը գետի հոսանքի կամ լեռների
հետ համեմատել):

6. Կարեռը ե նշանակել յեղանակը թուչունների անց-
նելու և վերադարձի ժամանակ, թեկուզ առանց զոր-
ծիքների՝ ջերմությունը (տաք, ցուրտ), ամպամածու-
թյունը, տեղումները և հատկապես քամին (ուժը և
ուղղությունը):

7. Ցերբեմն վերադարձը կտր անցնելն առժամա-
նակ ընդհատվում ե: Պետք ե նշանակել ընդհատման ըս-
կեղը և վերջը, և բացի այդ՝ ընդհատումն ուղեկցող
յերեսույթները (փոթորիկ, ձյուն, սառնամանիք, մեղ և
այլն):

Բացի վերօհիչյալից, չկի ժամանակ պետք ե նշա-
նակել և հետևյալը:

Բոլո՞ր անհամեներն եւ չվաւմ են (ձմհողները չե՞ն մնում) :

Ի՞նչպես են չվաւմ (բոլորը միասին, յերամներով, աստիճանաբար, անկատելի կերպով) :

Չուն դիտելն ավելի դժվար է, քան վերադարձը, ուստի պետք է հաճախ (ամեն որ) ըրջել ընտրած տեղերը և նշանակել ներկա յեզով թռչունները։ Միայն այս ձեռվ կարելի յէ ստույզ վորոշել, թէ՝ վոր տեսակը վոր որն և չվել։ Ցանկալի յէ նշանակել նաև թէ՝ չվերց առաջ թռչունները մեծ խմբեր կազմում և ողային խաղեր անում են։

Ի հարկե, այս ծրագիրը ամեն տեղի համար եւ ամբողջովին կիրառելի համարել չի կարելի։ Ծրագիր կազմելու և նրանցից ոգտվելու մասին արգեն ասել ենք։ Այստեղ միայն պիտի շեշտանք, վոր թռչունների կյանքում շատ ու շատ հետաքրքիր ու բնորոշական վայրելիքներ կան, վորոնք զանազան նկատառություններով այս ծրագրի մեջ չեն մտել։ Դիտողն ինքը պիտի փնտուի այդ յերեսութեանը, և նրանցից ամենակարեւորներն ընտրելով մյուս դիտողություններին դուդրնթաց արձանագրի։ Բայ ամին միշտ պետք է մանրամասն նկարագրել թռչունը և գրի առնել տեղական անունը։

Գրքի վերջում բերում ենք թռչունների ինչպես և դրանք հիշատակված այլ կենդանիների ուռւսերեն անունները համապատասխան գրականությունից ոգտվելով հեշտացնելու համար։

Ե. Միշտա-Փիմոլոգիկ դիտողություններ

1. Կաղամբարիքենի հայտնվելը (մարտ-ապրիլ)։ Հանրածանոթ թիթեռն է։

2. Կաղամբաթիթեռի կանաչ թրթունների հայտնրվելը (ապրիլ)։

3. Յեղնջաքիքենի հայտնվելը սա բավական իսաբարձես գունավորում ունի։

4. Դաշտային նոնանեների հայտնվելը։ 1-1½ սանտիմետր յերկարության թուչով բգեղներ են։ Վերնաթելերի վրա կան սպիտակ շերտեր, լնդհանուր առմամբ նման են արևածաղկի սերմերին։ Շատ տարածված բգեղներ են, լինում են մարգերում, դաշտերում, անապատներում։ Հայտնվում են ապրիլի վերջերին։

5. Մորեխ չվող։ 4,5-5,5 ս. մետր յերկարության գործ մորեխն է, կարճ շոշափուկներով։ Կրծքի վահանիկը վառ կանաչ է։

Այս միջատը պատահում է ստեղների շրջանում։ Մրա կյանքից պետք է նշանակել։

ա) հետիոտ մորեխի խումբ կաղմելը (խումբ կաղմում են անթե թրթունները ծնվելուց 3 որ անց)։ Սա տեղի յէ ունենում մայիսին։

բ) Թևագոր մորեխի հայտնվելը։ Մոտ հունիս-հուլիսին։

6. Բգեզ Անդրկովկասյան։ ծիրանիասնուկ։ Դարչնագույն խոչոր բգեզ է։ Վրան կան բազմաթիվ մանր անկանոն սպիտակ բծեր։ Պատահում է խալողի այդեների շրջաններում։ Հայտնվում է հուլիսին։

7. Անգույգ մետախահյուսի թրթուի հայտնվելը։ Այս թրթուը մոտ 7 սանտիմետր յերկարություն ունի, մոխրագույն և և բրուտ։ Առջեկ ողակների վրա վառ կապույտ, մնացածների վրա կարմիր ուռուցքներ ունի, վորոնց վրա յերկար մազերի փնջեր կան (ձեռք շատ, մազերը խրվում են կաշվի մեջ և ցավ պատճառում)։

Տարածված ե այդիներում և անտառներում։ Հայտնը-
վում է հունիս-հուլիս ամիսներին։ Մեծ վնաս է պատ-
ճառում այդիներին ու անտառներին։

8. Առաջին խայրող մոծակների հայտնվելը։

9. Ցիկադների առաջին յերգը։ Կարելի յէ ճանաչել
գլխավորապես ձայնից, վորն այսպես ե հնչուն՝ «չժի-
շժի-չժի»։

Բացի այս դիտողություններից, պետք ե նշանակել
և դանաղան միջատների մասսայական թոփքը։

Պետք ե նշանակել առհասարակ միջատների և հաս-
կապես վնասատուների մասսայական բազմացումը։ Այս
դեպքում անհրաժեշտ ե յերկությը հնար յեղածին չափ
լրիվ նկարագրել՝ նշելով ժամանակը և տեղողությունը,
(սկիզբը, մեծ ժամանակը, վերջը), մոտավոր քանակը, զար-
գացման ուղղությունը, յեղանակն այդ ժամանակ։

Ը. Այլ կենդանիներ դիտելը

1. Դոդոշների առաջին կանչը։ Բնդհատվող ձայն
են հանում (փոքր զանգակի ձայնի նման)։ Կանչում ե
մարտի կեսերից, զարդարում ե հոկտեմբեր-նոյեմբե-
րին։ Գորտի նման ե, բայց ավելի հաստ, հետեւ վոտ-
քերը քիչ են յերկար առջեկի վոտքերից։

2. Կողկասայան ագամայի հայտնվելը։ Մեզ մոտ
առածված մողեսներից ամենախոշորն ե (յերկարու-
թյունը հասնում է 34 սանտիմետրի)։ Մոխրագույն ե։
Արուն վզին մարմարի նման ուն նկար ունի։ Վաղելիս
չի սողում այլ պաշտ բարձր պահած չորս թաթերի վրա
յէ միայն հենվում։ Հաճախ քարերի վրա նստում ե շան
նման (մարմնի առջեկի մասը բարձր և թաթերի վրա

հենված)։ Բնակվում ե չոր, քարքարոտ և կավոտ
տեղերում։ Նայած յեղանակին հայտնվում ե փետրվա-
րի վերջերին կամ մարտի սկզբներին։ Թագնվում ե
հոկտեմբերին։

Թ. Ողերկույթաբական դիտողություններ կապված
քննության պարբերական յերկույթների հետ

Մենք արդեն ասել ենք, վոր բնության սեզոնային
յերկույթները սերտ կապված են տվյալ տեղի կլիմայի
հետ։ Այդ կապը պարզելու համար կարեոր ե կատարել
մի շարք պարզ ողերեկութարանական դիտողություն-
ներ։

Սեղոնային յերկույթների վրա ազդում են թե՛ կե-
ման և թե՛ յեղանակի աննորմալ ընթացքը։ Այս տեսա-
կետից բոլոր դիտողությունները կարելի յէ յերկու
խմբի բաժանել։

I. Տեղական կլիման ուսումնասիրելու նպատակով
պետք ե կատարել հետեւյալ դիտողությունները։

1) Գետակների, գետերի և լճերի ազատվելը սա-
ռուցներից (յեթե կան սառուցով ծածկվողները)։

2) Գարնան վերջին սառնամանիքը (շախտան)։

3) Վերջին ձյան հալքը։

4) Առաջին ամպրոպ (դիտել առաջին ամպրոպի
կապը ուշ վերադառն թուզունների հայտնվելու հետ։
Առաջին ամպրոպը ապացույց ե առաջին հա-
րավային կամ հարավ-արևելյան փոքրիչատե տաք հո-
սանքի, իսկ այդ տաք հոսանքի հետ սովորաբար գալիս
են մանգաղաթել, կկուն, մեղվակուլը և այլն)։

5) Առաջին աշնանային սառնամանիք (յեղյամ,
բույսերի ցրտահարություն, շախտա)։

6) Առաջին ձյուն և ձյան չերտի կազմվելը (վերջ-

նականապես նստող ձյուն, յեթե դա կանոնավոր տեղի
յէ ունենում) :

7) Գետակների, գետերի և լճերի սառչելը (յեթե
դա տեղի յէ ունենում) :

Բացի այս կարեոր գիտողություններից շատ կարե-
վոր ե իմանալ :

8) Արեւոտ որերի թիվը ամսվա, մի քանի ամիսնե-
րի կամ տաք յեղանակի ընթացքում :

9) Արեւի լուսավորման չափը : Սա կարելի յէ չա-
փել ըստ Վեզների :

0 — Արեւի դիրքը յերկնքի վրա չի վորոշվում :

1 — Արեւ յերեւմ ե իբր փայլուն բիծ առանց վո-
րոշակի սահմանների :

2 — Արեւ յերեւմ ե իբր խիստ վորոշակի գծված-
փայլուն բիծ :

3 — Արեւ շղարշի տակ ե :

4 — Արեւ միանգամայն պարզ ե :

Ամեն որ պետք ե այս տախտակի հիման վրա թվա-
նշաններով արտահայտել արեւի միջին լուսավորումը
շերեկվա ընթացքում :

10. Հատուկ քամիների ուժը և ուղղությունը:
Լեռնոտ յերկրներում ֆեն կոչվող հատուկ քամիներ
կան, վորոնք լեռներից իջնելով ողը տաքացնում են :
Այս հանգամանքն ազդում է գարնան ընթացքի վրա
(բույսերը շուտ են բացվում և ծաղկում, միջատները
չուտ են արթնանում, թուզունները վաղ են վերադառ-
նում և ալլն) : Յեթե ողի խոնավությունը չի ավելա-
նում, բայց ջերմաստիճանն արագորեն բարձրանում է,
կնշանակի ֆեն ե փչում : Այդ ժամանակ պետք ե չա-
փել քամու ուժը և ուղղությունը :

50

11. Ամպրոպների և կարկուտի ժամանակը և ուղ-
ղությունը : Վոր կողմից և յերբ ե լսվում առաջին ամպր-
ոպը, վոր կողմն է ուղղվում նա : Կայծակները և նը-
րանց կատարած ավելածությունը : Կարկուտի ուժը,
հատիկների մեծությունը և ձեր :

Զմեռային ամպրոպներ :

II. Անորմալ յերեւլյթների ուսումնասիրությունը .

1. Զմեռային տաք ալիքներ . նրանց ազգեցությու-
նը բույսերի և կենդանիների վրա (անժամանակ բաց-
վում են և հետո ցրտահարվում) :

2. Զմեռային և գարնանային ցուրտ ալիքներ : Նշա-
նակել շախտաների ժամանակը, տեղությունը, ջերմ-
աստիճանը, քամիները, ձյունը, ձյան շերտի հաստու-
թյունը : Արանց ազգեցությունն որգանական կյանքի
վրա (ցրտահարություն, գազանների հայտնվելը բնա-
կարանների մոտ և այլն) :

3. Գարնանային և ամառային հեղեղներ, սրանց
ժամանակը, տեղությանը և ազգեցությունն որգա-
նական կյանքի վրա (բույսերի չորանալ, տերեվաթափ,
արտերի պառկելը, բերքի վոշնչացում, միջատների ու-
թունունների հայտնվելը կամ անհետանալ և այլն) :

5. Փոթորիկ, փոշու փոթորիկ, թաթառ (քաջքա-
քամի) : Նշանակել քամու ուժը*) կատարած ավելա-
ծությունը, մթնոլորտի պղտորումը, ցանքսերի ծածկ-
վելն ավազով և փոշով : Մանրամասն հետազոտել քաջ-
քամու կամ թաթառի առաջացման վայրը, շարժվե-

*) Քամու ուժը նշանակում են լստ նրա հետևանք-
ների՝ ծխի թեքվելով, ծառերի անըների և ճյուղերի
շարժվելով և այլն : Այս մասին մանրամասն տես մեր
հրատարակած գրքույիլը ողերեկութաքանական դիտո-
ղություններ կատարելու մասին :

51

իու հւզգությունը և կատարած ավերածությունը :
Գունավոր անձրևներ :

6. Մեդ, չոր մառախուղ : Նրա խտությունը (առարկաների և արևելք յերևալը), յերկնքի գույնը, արևելքույնը, այրվածի հոտը (կա՞, թե չկա՞) : Յերեսութիւնը տեղությունը : Ազդեցությունը բույսերի վրա (թառամել, արտերի պառկել, հատիկի վորանալ և այլն) :

7. Աշնան «գարուն» : Յերբեմն աշնան ցրտերից հետո տաք յեղանակ և լինում և ձմռան քուն մտած բնությունն անժամանակ արթնանում է : Նման դեպքում մանրամասն նկարագրել այդպիսի «գարունը» : Բոլոր դիտողությունների ժամանակ պետք է նկարագրել մի քանի լավ ծանոթ բույսերի ու կենդանիների փոփոխությունները յեղանակի ազդեցության տակ :

Փ. Գյուղատնտեսական Փենո-դիտողություններ

Ինչպես արդեն ասել ենք բնության սեղոնային յերեվութների և գյուղատնտեսական աշխատանքների միջև սերտ կապ կա : Այդ կապը պարզելու համար «վայրի» բնության յերեւյթներին առընթեր անհրաժեշտ և դրի անցկացնել նաև մի շարք դիտողություններ գյուղատնտեսական արտադրության վերաբերյալ : Այստեղ բերում ենք մի փոքր ծրագիր :

1. Գարնան գարի

2. Աշնան գարի

3. Գարնան ցորեն

4. Աշնան ցորեն

5. Տարեկան (աշորա)

Յանքսը,
Հասկ տալը,
Շաղկելը,
Հունձը,

6. Բաժրակցանքս, առաջին ջուր, առաջին քաղցան, առաջին չանագ, վերջին չանագ :

7. Պտղատու ծառերի՝ ինձորի, տանձի, սերկեվիլի, ծիրանի, դեղձի, նուշի, կեռասի, բալի, սալորի, ընկույզի և այլ ծառերի ծաղկելն ու պտուղի հավաքելը :

8. Խաղողի բացելը, ետը, լացը, աչքերի բացվելը, տերեվելը, ծաղկելը, պտուղ կապելը, խաղողալիցք, հանելը, այգեկույթը, թաղելը :

9. Աշնան և գարնան հերկ :

10. Ցանովի խոտաբույսերի փոցխումը, 1-ին, 2-րդ և հետեւյալ հունձերը (նշել, թե վոր տարվա ցանքսն ե, յեթե խոտաբույսը բազմամյա յե) :

11. Խոտհարքի հունձը :

12. Սար գնալը և իջնելը :

13. Տեղի համար բնորոշ այլ գյուղատնտեսական աշխատանքներ :

Բոլոր դեպքերում ել պետք է նշանակել յերեւյթի սկիզբը և վերջը :

5. ԲՆՈՒԹՅԱՆ ՈՐԱՑՈՒՅՑ

Մի քանի տարվա դիտողությունները հավաքելով կարելի յե կազմել բնության որացույց :

Յեթե վերջին տարիների ընթացքում արտակարգ վաղ կամ ուշ գարուն չի յեղել, ապա 7-8 տարվա գիտողությունները բավական են բնության որացույց կազմելու համար, հակառակ դեպքում պետք է ունե-

նաև վոչ պակաս, քան 10 և ավելի տարիների նյութ։ Հինգ տարվա նյութն արդեն բավական չե։

Բնության որացույց կազմելիս նախ բոլոր ժամկետները դարձնում են նոր տոմարի։ Այնուհետև այդ ժամկետները վեր են ածում անընդհատ թվերի՝ սկսած հունվարի 1-ից։ Այսպես հաշվելով ապրիլի 1-ը կլինի տարվա 91-րդ կամ 92-րդ որը (նայած տարին նահանջ և թե հասարակ)։

Այնուհետև մի յերեսութին վերաբերվող բոլոր ժամկետները գումարում են և բաժանում դիտապության տարիների թվի վրա։ Ստացված անընդհատ թիվը յետ վեր են ածում որացույցայինի և այդպիսով փորոշում տվյալ յերեսութին միջին ժամկետը։

Դիցուք մի վորեւ յերեսութիւնը հաջորդող ուժ տարիներում տեղի յեւ ունեցել հետեւալ ժամկետներին։ — 1901 թ. — ապրիլի 13-ին, 1902 թ. ապրիլի 2-ին, 1903 թ. ապրիլի 7-ին, 1904 թ. ապրիլի 3-ին, 1905 թ. ապրիլի 15-ին, 1906 թ. ապրիլի 4-ին, 1907 թ. ապրիլի 8-ին և 1908 թ. մարտի 28-ին։ Համապատասխան անընդհատ թվերը կլինեն՝ հաշված հունվարի 1-ից 103, 92, 97, 94, 105, 94, 98, 88. գումարը կլինի 771. բաժանանք 8-ի, կստանանք 96, 375։ Բանի վոր կոտորակային մասը կեսից փոքր է, ուղղակի չնշում ենք և ստանում 96։ Յեթե կոտորակային մասը կեսից ավելի լիներ, ապա կամրողացնելինք. դիցուք յեթե կստանայինք 96, 743, կդարձնելինք 97։

Վերև ստացած թիվը՝ 96 պետք է գարձնենք որացույցային։ Նախ կհանենք հունվարի 31-ը, կմնա 65, ապա՝ փետրվարի 28-ը (մոտավոր հաշվով) կմնա 37,

վերջապես մարտի 31-ը կստանանք 6. ուրեմն տվյալ յերեսութիւնի միջին ժամկետը ապրիլի 6-ն է։

Այս ձեռվ կստանանք բոլոր դիտելի յերեսութիւնների միջին ժամկետները և ժամանակագրական կարգով ըստ ամիսների և որերի կդասավորենք։ Կստացվի բնության որացույց։

Յերեմն բնության որացույցին կից կազմում են նաև դիտելի առարկաների առանձին ցուցակ, վորի մեջ բնը բած են դիտողությունների ծայրահեղ թերումներն և այլն։

Բնության որացույցը կարելի յի արտահայտել դիտագրամի ձեռվ տվյալ բնական առարկաների գունավոր նկարներով (համապատասխան փուլի մեջ) և կախել տեղական թանգարաններում։ Թե ինչպես պետք է ոգտագործել բնության որացույցը գործնական կյանքում, այդ մասին արդեն ասել ենք «Փենուոգիկ դիտողությունների նշանակությունը» դիմում։

6. ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՈՒՐ ՈՒՂԱՐԿԵԼ ՖԵՆՈԼՈԳԻԿ ԴԻՏՈՂՈՒԴՅՈՒՆԵՐԸ

Մենք արդեն ասել ենք, թե ինչ խոշոր նշանակություն ունեն ֆենո-քարտեզները, վորոնց հիման վրա ճշտում են յեղանակի գուշակությունները։ Այդ քարտեզները և առհատարակ յերկրի բոլոր կետերի դիտությունների ընդհանրացումները խոշոր դիտական արժեք են ներկայացնում և կարող են նյութ ծառայել պետականային աշխատանքների համար (ըջայնացում)։

Այս էլ ենք ասել, վոր ընդհանրացումներ անելու

Համար միատարր նյութ պետք է ունենալ: Ուստի արժեքավոր լինելու համար կենտրոն ուղարկվելիք նյութերը պետք ե մի քանի պայմանի բավարարեն:

Նախ պիտի նշանակված լինի դիտողության վայրը, նահանգ, գավառ, շրջան, կետը (քաղաք, գյուղ, լեռնային արոտավայր). Հաճախ կարեք է լինում դիտողության տեղը ճիշտ վորոշել (յեթե քարտեզների վրա չկա), այս դեպքում պիտի նշանակել աշխարհագրական լայնությունը և յերկարությունը: Իսկ յեթե դիտողին դա հայտնի չե, ապա պետք է գրել, թե մոտակա քաղաքից, յերկաթզծի կայարանից կամ գյուղից ինչ հեռավորության վրա և վրա կողմն և գտնվում: Յուրաքանչյուր դրության կից պետք է լինի դիտողի մանրամասն հասցեն և լրիվ ու ընթեռնելի ստորագրությունը:

Առաջին հաղորդագրության մեջ պետք ե նշել և դիտողի ով լինելը (ողակայանի դիտող, ուսուցիչ, գյուղատնտես, վորսորդ, գյուղացի, աշակերտ, ուսանող, անտառապահ և այլն): Դպրոցների և առհասարակ կոլլեկտիվ կերպով կատարած դիտողություններն ուղարկելիս պետք ե նախ բոլորի դիտումը ի մի բերել և ընդհանուր աղյուսակ կազմել: Դիտողությունները պետք ե գրանցել ժամանակագրական կարգով և ստույգ կերպով: Զի կարելի գրել թե՝ յերեսվույթը տեղի յե ունեցել ասլրիլի սկզբներին կամ 10-ի և 20-ի միջև: Այդպիսի հաղորդագրությունը կատարելապես վոչ մի արժեք չունի: Պետք ե գրել ամիսը, որը և, յեթե հնարավոր ե, նաև ժամը (առավոտ, կեսօր, յերեկո):

Տարբեր տեղերում և տարբեր առարիներում կատարած դիտողությունները պետք ե առանձին թերթերի վրա լինեն գրված:

Յեթե վորեւ կետի մասին կարիք կա մանրամասն հաղորդելու, ավելի լավ և զա առանձին թերթի վրա գրել: Առանձին թերթի վրա պետք ե լինի նաև գրագրությունը (վոչ դիտողությունները):

Ցանկալի յե, վոր դիտողությունները չուշացվեն և ամեն ամսվա ընթացքում 4-5 կամ գոնե 3 անգամ (շաբաթը կամ 10 որը մեկ) ուղարկվեն հետևյալ հասցեյով՝ (Հայաստանի համար). Յերևան. Ադերեն-Վույրաբանական կայան:

Նամակադրոշ փակցնել հարկավոր չե. այսպիսի առաջնային ազատված են փոստային ծախսերից:

Այստեղ բերում ենք հաղորդագրության մի ուրինակ.

Հապոդագրության մի որինակ

Զարեհէ, Դիլիջանի բաժանու, Տարի.....
Դիտող՝ Գյուղացի (Ազգանունը)
Նազորդագրություն № 12 (Ներթագան Տէ-ը)

Ժամանակ ամիս	Յերեկութիւն	Յեղանակի դիմուլութիւն	Ծանօթութիւն
17/3	Սաղկեց խռճկորեկը	Պարզ և, տաք և ստվերում + 1.20	Հերթարիումի թերթ № 75
	Ծաղկեց կաղինը	Քամմի չկա	
	Անցան կռունկները	Ամպամած	Մեծ յերամեկը
18/3	Յեկազ հողուպը	Յերեկոյան անձրև	
	Յերեկաց կաղամմբա- թիթենը	Քամմի հարավից	

7. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՇԱՆԵՐ

Այս անունը տալիս են այն ժողովրդական առած-ներին և խոսքերին, վորոնք արտահայտում են ընության սեղոնային յերեսութեների փոխադարձ կապը (տանձր ծաղկեց—Հերկը սկսվեց). այդ խոսքերից մի քանիսը կարող են միայն բառախաղ լինել կամ թե տվյալ վայրին վոչ համապատասխան (յեթե գաղթողներն են իրենց հետ բերել): Սակայն ժողովրդական նշանների մեջ կան և այնպիսիները, վորոնք ժողովրդի դարավոր դիտողությունների բյուրեղացած արդյունքն են հանդիսանում: Իր բազմագարյան փորձի հիման վրա ժողովուրդը 1) չեշտում և վորոշ սեղոնային յերեսութեների և նրանց զարգացման փոխադարձ կապը, 2) չորհիվ դրա գուշակություններ և անում առաջիկա յեղանակների վերաբերմամբ: Պարզ և, վոր ֆենոլոգիայի համար ժողովրդական այդ նշանները մեծ նշանակություն ունեն: Սակայն վրանց մասին շատ բան տուի չենք կարող, վորովհետեւ այս ինդիքը մեզ մոտ դեռ ուսումնասիրված չեն:

Այդ զծով աշխատանքները պլանաչափ դարձնելու համար նախ պետք է հավաքել և գրի առնել անխոտիր բոլոր տեսակի և բավանդակության ժողովրդական նշանները: Այսուհետեւ հավաքած նյութը պետք է քրնության յենթարկել և պարզել, թե վորն է բառախաղ, վորն է յեկովի և տվյալ տեղի համար անհամապատասխան և վերջապես վորն է տեղական և արժեքավոր: Այդ աշխատանքն արդյունավետ կլինի, յեթե սուզումը կատարվի ֆենոլոգիկ դիտովուրյունների հիման վրա: Այդ բովից անցնելուց հետո ժողովրդա-

կան նշանները կարող են դառնալ դիտական տվյալներ : Ժողովրդական նշանների ուսումնասիրությունը կարճացնում և հեշտացնում ե դիտողական ֆենոդիմայի գործը վորչափ դրա դորձնական նպատակը յեղանակի գուշակությունն ե :

Այս հանգամանքն ի նկատի առնելով կարելի յեպնել, վոր առաջին հերթին ֆենոլոգը պիտի հետաքրքրվի ժողովրդական նշաններով :

8. ՖԵՆՈԼՈԳԻԱՆ ԴՐՈՑՈՒՄ

Ֆենոլոգիան դանդաղ, բայց հաստատ քայլերով մտնում է խորհրդային դպրոցը : Ի՞նչ ե տալիս նա դպրոցին .

1) Ֆենոլոգիան առաջին հերթին դպրոցին տալիս ե բնությունը և գյուղատնտեսական արտադրությունն ուսումնասիրելու մի յուրահատուկ գիտական մեթոդ : Յեթե լաբորատորական պարապմունքները համարվում են կարինետային աշխատանքի ձև, եքսկուրսիան՝ կարճատև հետազոտությունների ձև, ապա ֆենոլոգիկ դիտողությունները պիտի համարենք այդ յերկու արգեն ճանաչված ձեերին համազոր մի ինքնատիպ ձև, վորն իր բնություվ տելվական ե, մշտատեղային (ստացիոնար), ուստի և բնությունն ուսումնասիրելու տեսակետից լայն չափով հետազոտական :

2) Ֆենոլոգիան դպրոցն ընդհանուր մոտեցնում է մի կողմից բնությանը, մյուս կողմից հասարակական աշխատանքին : Ֆենոլոգիայի նյութը վերջին հաշվով դերագանցորեն գործնական և արտադրական խոշոր արժեք ունի, ուստի և իրենից հասարակություն ոդուած

կար աշխատանք ե ներկայացնում : Յեկ զարմանալի չե, վոր աշխատանքի դպրոցի ծրագրում ֆենոլոգիան պատվավոր տեղ ե զրավում, թեև դժբախտաբար դպրոցի կողմից աչքաթող ե արվում :

3) Ֆենոլոգիկ դիտողությունները հարմար են և անհրաժեշտ բոլոր հասակների համար՝ մանկավարտեղային տարիքից մինչև 2-րդ ասաբճանի ավարտական խումբը : Ել չենք խոսում գյուղյերի կամ պարունական ու մանկավարժական տեխնիկայի մասին, վորտեղ ֆենոլոգիան բնագիտության մեջ պետք ե գերակշռող տեղ գրավի : Իհարկե բոլոր հասակներին նույն աշխատանքն առաջարկել չե կարելի : Մեթոդիկայի գործն և տարբեր հասակների համար ֆենոլոգիկ աշխատանքներն այնպիս խմբավորել, վոր նրանք թե՛ հետաքրքիր, թե՛ կրթական և թե՛ հասարակություն ոգտակար լինեն :

Ֆենոլոգիայի առանձնացումը ինչվոր պաշտոնական «դասավանդումից» սխալ և վնասակար մտայնություն ե : Ֆենոլոգիան ըստ ամենայնի չափազանց խոշոր կրթական արժեք ունի և հետեւապես պիտի հյուափի դպրոցական բոլոր աշխատանքների հետ :

Մասսայական ֆենոլոգիկ դիտողություններ կատարելու անսակետից դպրոցը մեծ գործ կարող ե անել գավառում : Առաջին հերթին նա յե, վոր ունի պայմաններ և ժամանակ դրանով զբաղվելու : Սակայն չպետք ե այս միտքը ծայրահեղացնել և սխալ հասկանալ : Ամեն մի մասսայական աշխատանք ինչպես և ֆենոլոգիկ դիտողությունները հնար յեղածին չափ մեծ արդյունք կարող են տալ միայն այն դեպքում, յերբ չահագրգուված կազմակերպությունները

և անհատները՝ դպրոցը, ագրոկայանը, գյուղատնտեսը, գյուղացին, վորորդը կոլեկտիվ աշխատեն և սերտ շաղկապ ունենան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս Փենոլոգիայի մասին բավական մեծ գրականություն կա: Այստեղ բերում ենք ամենակարևոր ձեռնարկները:

1) А. Г. Балабуев и Н. А. Троицкий. Наблюдения над периодическими явлениями в природе. Программы и инструкции. Издание Тифлисского отдела народного образования Тифлис — 1929 г. Цена 75 к.

Այս գիրքը մեզ համար հատկապես հետաքրքիր է, քանի վոր նրա մեջ բերված ծրագրերը մեր յերկրի նման վայրի համար ե կազմված: Գրքույիս կազմելիս մեծ չափով ոգտվել ենք այդ արժեքավոր ձեռնարկից:

Д. О. Святский фенология в краеведческой работе. Ленинград — 1926 г. Цена 1 рубль.

Այս գիրքը շատ կարևոր է յուրաքանչյուր գավառագետի համար: Նրա մեջ կա թե Փենոլոգիայի պատմությունը համառոտ կերպով, թե զանազան տեսակետները նրա մասին, նյութը մշակելու ձևերը, Փենո-քարտեզներ կազմելը, ժողովրդական նշանները և այլն: Գրքում կան բազմաթիվ ծրագրեր՝ միջազգային ծրագրերը, միության նվազագույն ծրագրերը, լայնացրած ծրագրեր: Ֆենելոգը կարող է այդ ծրագրերից դիտողության նոր առարկաներ ընտրել: Այստեղ բերված ե գրականության ավելի մեծ ցուցակ:

3) И. С. Щербиновский—Местная природа и сельское хозяйство. 1926. Цена 1 р. 75 к.

Հետաքրքիր գիրք է, վորի մեջ վոչ միայն ֆենոլոգիան ե բերված, այլև բույսեր չորացնելու, կենդանիներ կոնսերվելու ձևերը և առասարակ շատ խորհուրդներ: Գրված ե գյուղատնտեսական թերումով:

4) И. С. Щербиновский—К методике школьных фенологических наблюдений. 1926. Цена 50 к.

Մեթոդական խնդիրների վերլուծում. որա տեսակետը մի փոքր միակողմանի յէ գյուղացական Փենոլոգիայի մասին: Մնացածում շատ հետաքրքիր աշխատություն է:

ԳՐՔՈՒՅԿԻՍ ՄԵԶ ՀԱՆԴԻՄՈՂ ԲՈՒՅԱՐԻ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՈՈՒԽԱՐԵՆ ՅԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆ
ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

ա) Բույսերի ցաւցակ

Արճ, Боярышник, Crataegus monogyna կամ
Ср. oxyacantha

Աղուչա, առև սալորենի վարիք

Ակացիա սպիտակ, Robinia pseudacacia.

Աղբիր, Раковые шейки, Polygonum Bistorta

Աճարի, Бук, Fagus orientalis

Առվուտ, Люцерна, Medicago

Արձճախոտ, Свинчатка, Plumbago europaea

Արտի, Рябина, Sorbus aucuparia

Բոխի, Граб, Carpinus Betulus

Գետնամորի, Земляника, Fragaria vesca

Դավաթիքյա, տես ուղտափուշ

Չողալ—տես հոն

Հնկուց, Грецкий орех, Juglans regia

Թեղի, Илим, Ulmus campestris

Թիմինի, Черемуха, Prunus Padus

Թղկի սրատերել, Клен остролистный, Acer platanoides

Լորենի, Липа, Tilia parvifolia

Լվածաղիկ, Ромашка, Pyrethrum roseum & P. carneum

Խլոպուզ, Мерендера, Merendera caucasica

Խոճկորիկ, Мать и мачеха, Tussilago farfara

Կաղամախի, Осина, Populus tremula

Կաղին, Мелкий орешник, Corylus Alellana

Կաղսի լեռնաշին, Дуб горный, Quercus macranthera

Կապար, Кацереник, Capparis herbacea

Կեչի, Береза, Betula verrucosa

Կնձնի, տես թեղի

Կծոխոս, Барбарис, Berberis vulgaris

Հաղարձ կարմիր, Смородина красная, Ribes rubrum.

Հոն, Կոизил, Cornus mas.

Զնծաղիկ, տես իրապուզ

Ճղոպուր, տես ընկույզ

Մանդիկ, տես աղիր

Մոռ, Малина, Rubus Idaeus

Յասաման, տես շեփորուկ

Յեղածաղիկ թզարմատ, Жабник, Ranunculus Ficaria

Յերեքնուկ, Клевер, Trifolium

Նշենի, Миндаль, Amygdalus communis

Շագանակ ձիու, Конский каштан, Aesculus Hippocastanum

Շեփորակ, Сирень, Syringa vulgaris

Ուղտափուշ, Верблюжья трава, Alhagi camelorum

Վնդուկ, տես կաղին

Վուլուք, տես ընկույզ

Սալորենի վալրի, Алуша, Prunus institia

Սերկեղիլ, Айва, Cydonia vulgaris

Սզնի, տես ալոճ

Մնձենի, տես արասի

Տիփիլ, տես կաղին

Տկողին, տես կաղին

Ճակրի նեղատերեն, Крушина Палласова, Rhamnus

Pallasii

Ճարասի, տես կեչի

Ճաքի, Держи дерево, Paliurus aculeatus

Փշատ, Лох, Elaeagnus hortensis

Քալամբուր, տես կաղամախի

ՑՈՒՑԱԿ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ

Ագամա կովկասյան, Агама кавказская

Արագիլ, Аист белый

Արտուռ լեռնաշին լեղիրավիր, Жаворонок горный

Բղեղ մարմարե, Хрущ мраморный

Դողուշ, Жаба

Դրախտապան սելվագլուխ, Овсянка черноголовая

Լոր, Перепел

Ծիծենակ գլուզի, Ласточка касатка

Ծիծենակ քաղաքի, Ласточка городская

Ծիրանհասնուկ, Ցես բղեղ մարմարե,

Կաղամբաթիթեռ, Капустница

Կըկու, Кукушка

Կռունկ, Журавль серый
Հոպուց, Уодод
Ճացակ, Галка
Ճոճուան դաշտավին, Скрипун полевой
Մանգաղաթել, Стриж черный
Մաքալուկ, Муха мангула
Մեղմակուլ, Щурка золотистая
Մետաքսահրուտ անզուց, Шелкопряд непарный
Մկնաբազի դաշտավին, Лунь полевой
Մկնաբազի մարգի, Лунь луговой
Մկնաբազի ստեղի, Лунь степной
Մոծակ, Комар
Մորեխ չվուզ, Саранча
Ներկարար, Сизоворонка
Շամփրուկ, Сороконут-жулан
Պիրուլ, Иволга
Սերմնաքաղ, Грач,
Վորմնագնաց, Стенолаз
Տապակ, Горлинка
Տուլաշ, тбк սերմնաքաղ
Ճիկադ, Пикада
Ճին, Коршун



Ց Ա Ն Կ

ԱՌԱՋԱԲԱՆ

1.	Ֆենոլգիա	3
2.	Ֆենոլգիկ դիտողությունների նշանակությունը	10
3.	Դիտողության առաջարկների լնտրությունը	15
4.	Ֆենոլգիկ դիտողությունների ծրագիր	22
	ա) Դիտելի բույսերի ցուցակ	22
	բ) Բույսերի նկարներ	24
	գ) Յուցմունքներ բուսա-ֆենոլոգիկ դիտողությունների համար	35
	դ) Թոշնա-ֆենոլոգիկ դիտողություններ	38
	յի) Ծրագրի բացատրական	39
	զ) Յուցմունքներ թոշնա-ֆենոլոգիկ դիտողությունների համար	44
	ե) Միջատա-ֆենոլոգիկ դիտողություններ	46
	ը) Այլ կենդանիներ դիտելը	48
	թ) Ողերևույթաբանական դիտողություններ կապված բնության պարբերական յերեսույթների հետ	49
	ժ) Գյուղատնտեսական ֆենո-դիտողություններ	52
5.	Բնության որացույց	53
6.	Խնչակն և ուր ուղարկել ֆենոլգիկ դիտողությունները	55
7.	Ժողովրդական նշաններ	59
8.	Ֆենոլգիան դպրոցում	60
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	62

10

5174

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0069630

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ՀԱՅԵՀ ԳԱՎԱԾՈՒԹԻՑԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲՅՈՒՔՈՅԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍՆԵԼ.

- | | |
|--|----------|
| 1. Փ. ՃԳԵԱԾՈՒԹՅԱՆ.—ինչո՞ւ և ինչպե՞ս պետք է ուսում- | 30 կրագ- |
| ննուիրենք շրերը . 48 հջ | |
| 2. Ա. ՃԱՌԱՎՈՒԿԻ.—Տեղական բնույթյան քանօպարան | 20 կրագ- |
| 36 հջ | |
| 3. Ո. ԼԻՍԵՅՅԱՆ և ՅԵ. ԲՈՅԲՈՒԹՅԱՆ.—Հնույթյուննե- | 40 կրագ- |
| րի ցուցակագրությունն ու նկարագրությունն | |
| 72 հջ | |
| 4. Ա. ԱՐԱՐԱՏՅԱՆ.—Ֆենոլոգիկ գիտողություններ. | 50 կրագ- |
| 67 հջ | |

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Ե ՅԵՎ, ՇՈՒՏՈՎ, ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆԵԼՈՒ

- | | |
|---|----------|
| 1. Մ. ԶՈՒ-ԶՅՅԱՆ.—ինչպե՞ս և փառապե՞ս կատարել յերկ- | 50 կրագ- |
| րաբանական դիտողություններ (39 հջ) | |

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍՆԵԼՈՒ—ԶԵՄՆԵՐԿՆԵՐ

- | | |
|----------------------------------|--|
| 1. Մարդարանական | |
| 2. Հոգաղիսական | |
| 3. Բուռարանական | |
| 4. Կլիմայարանական | |
| 5. Կոսովերասարիվ | |
| ա) սպառկանպ. | |
| բ) կուտանսեւություն | |
| 6. Տնականգիտական | |
| 7. Երակուրախան | |
| 8. Արդյունագործական | |
| 9. Գալվանագիտական-բազլուսվարական | |
| (կազմակերպչական բնույթի) | |
| 10. Գալվանագիտական-գոլբոցական | |
| (կազմակերպչական բնույթի) | |
| 11. Տնականգործական | |
| 12. Խորչ. անականություն | |